

ՀՈՒՅՄ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

Կեցցե՛

Հայաստանի և Արցախի

Հանրապետությունները



215, Մեպտեմբեր 2016 թ. No 215, September 2016 شماره ۲۱۵ مهر ماه ۱۳۹۵

Այս համարում

Հայերեն բաժին

1- Խմբագրական.....	0
2- Հայաստանի Հանրապետություն.....	1
3- Արևմտյան Հայաստան.....	11
4- Միյուտք.....	14
5- Միջազգային.....	15
6- Հասարակական.....	17
7- Մշակույթ.....	18

Պարսկերեն բաժին

Արցախի պատմություն.....	0-4
Գրականություն- Ալիսա Հովհաննիսյան.....	5-6

Շապիկի առաջին էջում` Կեցցե Հայաստանի և Արցախի հանրապետությունները

Վերջին էջում` Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 215, Մեպ. 2016 No. 215, Sep. 2016

ماهنامه لویس - شماره ۲۱۵ مهر ماه ۱۳۹۵

ԼՈՒՅՍ

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝
Էդ. Բաղդասարյան
Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան
Թամ Ղարախանյան, Սաթենիկ Ավետիսյան
Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան

Փոստարկղ **15875-9488** Թեիրան - Իրան
Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com
Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**
POBox **15875-9488 Tehran – Iran**
E-mail : louys_monthly@yahoo.com
Internet : www.louysonline.com

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

ماهنامه لویس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر: ادیک باغداساریان

نشانی نشریه : تهران صندوق پستی ۱۵۸۷۵-۹۴۸۸

پست الکترونیکی: louys_monthly@yahoo.com

نشانی اینترنت : www.louysonline.com

Հայաստանի Հանրապետությունը 25 տարեկան է

Այսօր՝ սեպտեմբերի 21-ին, ողջ աշխարհի հայությունը նշում է Հայաստանի Հանրապետության Անկախության օրը:

Հայաստանի Անկախության հռչակագիրն ընդունվել է 1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն Խորհրդի նիստում:

ԽՍՀՄ օրենսդրությանը լիովին համապատասխան 1991թ. սեպտեմբերի 21-ին ՀՀ տարածքում անցկացվեց ԽՍՀՄ-ից դուրս գալու հարցով հանրաքվե, որին մասնակցելու իրավունք ունեցող 2,056,758 քաղաքացիներից 2,042,627-ը (94.39%) Հայաստանի անկախությանը «այո» ասացին: Դեմ էր ընդամենը 10 հազար մարդ կամ 0,46 տոկոսը:

1990 թ. Անկախության հռչակագրից հետո ՀՀ Գերագույն խորհրդի որոշումով 1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի տարածքում անցկացվեց հանրաքվե: Հայաստանի Հանրապետության բնակչությունը պատասխանեց հետևյալ հարցին. «Համաձայն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ, ժողովրդավարական հանրապետություն՝ ԽՍՀՄ կազմից դուրս»:

Հաջորդ օրը հրապարակվեց ՀՀ անդրանիկ անկախ օրենսդիր մարմնի դիմումը հայ ժողովրդին. «Ազատության ճանապարհին մեզ սպասում են նոր փորձություններ, դա ամենօրյա քննություն է լինելու մեզ համար: Պահպանենք մեր ոգևորությունը, բայց համակվենք իրապաշտությանը, շարունակենք մնալ երագող, բայց սթափ դատողությամբ»:

Սեպտեմբերի 23-ին ՀՀ Գերագույն խորհուրդը, ամփոփելով հանրաքվեի արդյունքները, Հայաստանի Հանրապետությունը հռչակեց անկախ պետություն:

Գերագույն խորհրդի կողմից անկախության հռչակումից հետո տասնյակ պետություններ ճանաչեցին Հայաստանի Հանրապետությունը: Առաջինը Լիտվան է, որ ՀՀ-ն ճանաչել է դեռ մինչև անկախության հռչակումը՝ 1991 թ. Օգոստոսի 14-ին: Այա 1991 թ. ընթացքում եւս 47 պետություն ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը:

Սեպտեմբերի 2-ը շրջադարձային եղավ եւ փոխեց արցախահայության պատմության ընթացքը. Բակո Սահակյան



1991 թվականի սեպտեմբերի 2-ը շրջադարձային եղավ արցախահայության կյանքում եւ փոխեց նրա պատմության ընթացքը: Այս մասին, այսօր՝ սեպտեմբերի 2-ին, ԼՂՀ անկախության օրվա առթիվ իր շնորհավորական ուղերձում նշել է ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը:

Նրա ուղերձում, մասնավորապես, ասվում է.

«Այսօր տոնում ենք Արցախի Հանրապետության հռչակման 25-րդ տարեդարձը: Հանրապետության իշխանությունների եւ անձամբ իմ անունից ի սրտե շնորհավորում եմ մեր ողջ ժողովրդին պետական այս կարեւորագույն տոնի կապակցությամբ:

1991 թվականի սեպտեմբերի 2-ը շրջադարձային եղավ արցախահայության կյանքում եւ փոխեց նրա պատմության ընթացքը: Մեր վճռորոշ ձայնը բարձրացնելով ի օգուտ ազատ ու անկախ Արցախի՝ մենք ազգովի ձեռնամուխ եղանք պետականաշինության գործընթացին, սկսեցինք կառուցել ժողովրդավարական պետություն՝ միջազգային նորմերին ու սկզբունքներին համապատասխան:

Մեր ընտրած ուղին բարդ էր ու դժվարին: Արցախի ժողովրդի արդար եւ օրինական պահանջին Ադրբեջանը հակադարձեց բռնություններով ու կոտորածներով եւ սանձազերծեց արյունալի պատերազմ: Մենք ստիպված էինք զենք վերցնել եւ ամեն գնով պաշտպանել մեր նորանկախ պետության ազատությունն ու անվտանգությունը, մեր ժողովրդի խաղաղությունն ու անդորրը, մեր պատմական հողն ու իրավունքները:

Այդ ծանր օրերին, ինչպես նաեւ հետագա բոլոր տարիների ընթացքում Արցախի կողքին էին Մայր Հայաստանը եւ Սփյուռքը: Աշխարհասփյուռ հայության գործուն աջակցությամբ եւ ակտիվ մասնակցությամբ մենք կարողացանք պատվով հաղթահարել բոլոր փորձություններն ու դժվարությունները, հաղթանակ տարանք մեզ պարտադրված պատերազմում եւ սկսեցինք շենացնել ու զորացնել բոլորիս համար թանկ ու նվիրական Արցախը, մեր Հայրենիքը:

Մեր կողքին էին նաեւ բարի ու ազնիվ շատ մարդիկ աշխարհի տարբեր ծայրերից, ում համար մարդասիրությունն

ու ժողովրդավարական արժեքների պաշտպանությունը վեր է ամեն ինչից: Արցախի ժողովուրդը խորապես երախտապարտ է իր բոլոր բարեկամներին եւ բարձր է գնահատում նրանց ավանդը մեր անկախ պետականության կայացման ու զարգացման գործում:

Թանկագին հայրենակիցներ,

Այս տոնական օրը մենք հատուկ երախտագիտությամբ հիշում ենք մեր բոլոր նահատակներին, հայ ժողովրդի քաջ զավակներին, նրանց, ովքեր իրենց կյանքի գնով ճանապարհ հարթեցին մեր հայրենիքի պայծառ ու լուսավոր ապագայի համար: Մենք պարտավոր ենք միշտ վառ պահել մեր նվիրյալների հիշատակը, եւ դրա լավագույն ուղին ազատ ու անկախ Արցախի շարունակական զարգացումն ու գորացումն է:

Մեկ անգամ եւս շնորհավորում եմ բոլորիդ հիշարժան տոնի առթիվ եւ մաղթում քաջառողջություն, հաջողություններ ու ամենայն բարիք, մեր ժողովրդին՝ խաղաղություն ու բարեկեցություն»:

Արցախի հարցը ռազմական ճանապարհով լուծող ուժ աշխարհում գոյություն չունի. Մերժ Սարգսյանի շնորհավորանքը



Արցախի հարցը ռազմական ճանապարհով լուծող ուժ աշխարհում գոյություն չունի: Այս մասին, այսօր՝ սեպտեմբերի 2-ին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Անկախության տոնի առթիվ իր շնորհավորական ուղերձում նշել է ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանը:

Ուղերձում, մասնավորապես, ասվում է.

«Միրելի՛ հայրենակիցներ,

Շնորհավորում եմ ձեզ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության 25-ամյակի առթիվ:

1991 թվականի սեպտեմբերի 2-ը հայոց նորագույն պատմության փառահեղ էջն է: Քառորդ դար անաջ արցախահայությունը կատարեց իր անբեկանելի ընտրությունը: Այդ բախտորոշ քայլը գիտակցված էր եւ իմաստավորված: Այդ ընտրությամբ, այդ կամքով ու վճռականությամբ ստույգ մահվան անդունդի եզրից դեպի կյանք եւ դեպի ազատություն վերադարձավ հայության ամենավտանգված հատվածը՝ արցախահայությունը:

Դուք կռվեցիք եւ հաղթեցիք անհավասար պատերազմում: Դուք կառուցեցիք մի պետություն եւ հասարակություն, որն

ազատ է ինչպես երբեւէ: Դուք ստեղծեցիք բանակ, որն ամուր է եւ մարտունակ ինչպես երբեւէ: Դուք ավերակներից բարձրացրիք մի երկրամաս, որ երբեւէ այսքան խնամված ու գեղեցիկ չի եղել: Դուք սպացուցեցիք ինքներդ ձեզ, ողջ հայությանը եւ աշխարհին, որ ազատ Արցախը ոչ միայն կենսունակ է, այլեւ ունի բազմակողմանի զարգացման մեծ ներուժ:

Իհարկեւ, այդ ներուժը դեռ ամբողջությամբ չի իրացվել: Իհարկեւ, դեռ շատ անելիքներ ունենք եւ՝ Արցախում, եւ՝ Հայաստանում: Եվ իհարկեւ, անելու ենք մեր անելիքը: Անելու ենք համայն հայության ջանքերով: Անելու ենք ի հեճուկս բոլոր դժվարությունների եւ մարտահրավերների:

Անցած ապրիլի ռազմական գործողությունները եւս մեկ անգամ, կարելի է ասել՝ մի ավելորդ անգամ, ապացուցեցին, որ թշնամին մեծ կորուստներով հետ է շարվելու, եթե փորձի ռազմական ճանապարհով հարց լուծել: Ապացուցեցին, որ Արցախի հարցը ռազմական ճանապարհով լուծող ուժ աշխարհում գոյություն չունի: Գոյություն չունի, որովհետեւ դուք կաք, որովհետեւ դուք հավատարիմ եք 25 տարի առաջ կատարած ձեր ընտրությանը: Չկա՝ ռազմական ճանապարհ: Կա քաղաքական ճանապարհ:

Այսօր՝ այս նվիրական օրը, կրկին ասում եմ ձեզ. ինչպես երեկ, ինչպես այսօր, այնպես էլ վաղը դուք եք որոշում ձեր ճակատագիրը: Արցախի լուսավոր ապագայի նկատմամբ մենք կասկածներ չունենք:

Կեցցե՛ք ազատ ու անկախ Արցախը:

Կեցցե՛ք Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը»:

Հայաստանի Հանրապետություն

Օրվա գլխավոր լուրերը՝ «մեկ տողով»

Կարեն Կարապետյանի՝ վարչապետի պաշտոնում նշանակվելուց 7 օր անց ուրվագծվեց նոր կառավարության կազմը: Անկախության տոնի նախօրեին գործադիրը լքեց Գագիկ Բեգլարյանը: Տրանսպորտի եւ կապի նախարար նշանակվեց Վահան Մարտիրոսյանը, որը, ըստ մամուլի տեղեկությունների, «Ռոստելեկոմի» բաժնետերերից է: Մերգո Կարապետյանի փոխարեն գյուղնախարար նշանակվեց «Ռեռնո Ռիկար» կոնյակի գործարանի գլխավոր Ֆինանսիստ Իզնատի Առաքելյանը: Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարի պաշտոնում Լեւոն Յոլյանի փոխարեն նշանակվեց Աշոտ Մանուկյանը, որը նույն նախարարության կադրերից է: Նախարար նշանակվելուց առաջ նա «Հրազդան Ջեկ»-ի տնօրենն էր, որի միակ բաժնետերն է ռուսական «ԻՆՏԵՌ ՌՎՕ» բաց բաժնետիրական ընկերությունը: Ֆինանսների նախարար գործադիրի հնարնակ Գագիկ Խաչատրյանին փոխարինեց Վարդան Արամյանը, որը նորանշանակների մեջ միակն է, որը քիչ թե շատ հայտնի է հասարակությանը: Վարդան Արամյանը ֆինանսների փոխնախարար էր եւ 2013 թվականին տեղափոխվել է նախագահական նստավայր՝ որպես աշխատակազմի ղեկավարի տեղակալ:

Նոր կառավարությունում իրենց տեղերը պահպանել են աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանը եւ Միջազգային տնտեսական ինտեգրման եւ քարտեզագրման նախարար Վաչե Գաբրիելյանը:

Կադրային փոփոխություն է տեղի ունեցել նաեւ նախագահի նստավայրում: Ուրուգվայից Բադրամյան 26 է տեղափոխվել դեսպան Ալեքսան Հարությունյանը, որը երկար տարիներ նախկինում զբաղեցրել է Հանրային հեռուստառադիոյի ղեկավարի նախագահի պաշտոնը: Պաշտոնակատարությունների շարքը ամենայն հավանականությամբ կշարունակվի անկախության տոնակատարությունից հետո:

Մեպտեմբերի 20-ին Գյումրիում ողբերգական դեպք է տեղի ունեցել: Իրենց տան նկուղում գլխին ստացած հրազենային վնասվածքով հայտնաբերվել է քաղաքապետի թեկնածու Վարդեան Գրիգորյանի որդու՝ 25-ամյա Արշակ Գրիգորյանը: Հարազատները նրան շտապ տեղափոխել են հիվանդանոց, սակայն ճանապարհին երիտասարդը մահացել է: Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ՝ ինքնասպանության հասցնելու հողվածով: Ողբերգության կապակցությամբ քաղաքապետի բոլոր թեկնածուները ժամանակավորապես դադարեցրել են քարոզարշավը: Վարդեան Գրիգորյանը երկու ամիս առաջ էր ազատվել Գյումրու մանկավարժական ինստիտուտի ռեկտորի պաշտոնից: Նա Բարգավաճ Հայաստանի թեկնածուն է հոկտեմբերի 2-ին կայանալիք քաղաքապետի ընտրություններում:

Մեպտեմբերի 19-ի երեկոյան Արմավիրի մարզում Սևջուր-Ախթամար ջրատարում կնոջ մարմին է հայտնաբերվել: Ոստիկանությունը պարզել է, որ մահացածը 38-ամյա Նարինե Դանիելյանն է: Մարմնի տարբեր մասերում բռնության հետքեր են հայտնաբերվել: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ կնոջը խանդի հողի վրա վիճաբանության ժամանակ ծեծելով սպանել է ամուսինը՝ 46-ամյա Արթուրը, ապա մարմինը նետել ջրատարը: Ամուսինը ձերբակալված է:

Հայաստանի Հանրապետության անկախության 25-րդ տարեդարձի կապակցությամբ Մերժ Սարգսյանն այսօր մի խումբ անձանց պարզևատրել է քարձրագույն պարզևներով շքանշաններով և մեդալներով, շնորհվել են նաև պատվավոր և զինվորական կոչումներ: Պարզևատրվել են քառօրյա պատերազմին մասնակցած զինվորականներ, մշակութային գործիչներ, գիտության, կրթության, առողջապահության ոլորտների ներկայացուցիչներ, պատգամավորներ: Ոստիկանապետի երկու տեղակալները ստացել են գեներալ-մայորի կոչումներ: Գեներալ-մայորի կոչում է շնորհվել նաև երկու գնդապետի:

Քաղաքագետ. Ռուսաստանը «Իսկանդերներով» Հայաստանին փոխհատուցեց Ադրբեջանին զենքի մատակարարումները

Անկախության 25-ամյակի գորահանդեսին Հայաստանի ՉՌԲ-ն առաջին անգամ կցուցադրի «Իսկանդեր» համակարգը: Թողակցի հետ գրույցում ռազմական փորձագետ Արկադի Գրիգորյանը հայտնել է, որ նախօրեին գորահանդեսի փորձին համալիրը հայտնվել է ներկայացված սպառազինության շարքում:



Արզենտինայի եւս 17 նահանգներ, նաեւ մայրաքաղաք Բուենոս Այրեսը նախկինում աջակցել են օրինագծին, որը կառ

Հովիկ Աբրահամյանը հրաժարական է տվել



«Հայաստանում առաջին անգամ է «Իսկանդերների» ցուցադրություն տեղի ունենում: Ավելին, «սառը պատերազմի» ժամանակաշրջանից հետո առաջին անգամ մեկ երկրի կողմից մյուսին նման օպերատիվ-մարտավարական հրթիռային համալիրների մատակարարում է իրականացվել», - ընդգծել է փորձագետը: Մեկնաբանելով Հայաստանի ՉՈՒԲ-ի կողմից «Իսկանդեր» համալիրների ցուցադրությունը՝ քաղաքագետ Ալեքսանդր Խրամչիխինը նշել է, որ այդ քայլի կողմնակի հետեւանքները կարող են շատ հզոր լինել: «Դա քաղաքական ուժեղ քայլ է: Մինչ այժմ «Իսկանդերներ» չէին արտահանվել: Դա քաղաքական ցուցադրություն է»: Պատասխանելով ճշգրտող հարցին՝ Հայաստանի իշխանությունների կողմից, թե Ռուսաստանի, Ալեքսանդր Խրամչիխինը նշել է. «Եվ մեկի, եւ մյուսի: Ռուսաստանը Հայաստանին փոխհատուցել է

ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը հրաժարականի դիմում է ներկայացրել: Այս մասին նա հայտարարել է այսօր՝ Կառավարության սեպտեմբերի 8-ի նիստի ժամանակ: Նա իր խոսքում, մասնավորապես նշել է. «Մեր որդեգրած անկեղծ եւ իրատեսական մոտեցումներն իրենց արդյունքն ունեցան՝ սակայն հասարակությունը դեռեւս մնաց բեւեռացված: Իմ կարծիքով, դրա հիմնական պատճառներից մեկն աշխարհաքաղաքական, արտաքին տնտեսական եւ ռազմական մարտահրավերներով սնվող առկա տարածայնություններն են: Դրանք են, որ դեռեւս հնարավորություն չեն ընձեռում մեզ՝ ժողովելով բոլոր ուժերը, հրատապ լուծումներ տալ մեր առջեւ ծառայած կարեւորագույն խնդիրներին՝ տնտեսական հավասար պայմաններ ապահովելուց մինչեւ կոռուպցիայի դեմ պայքարը:

Ադրբեջանին զենքի մատակարարումները: Արզենտինայի Կատամարկա նահանգը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը



Արզենտինայի Կատամարկա նահանգը միացել է երկրի մյուս նահանգներին եւ ապրիլի 24-ը ճանաչել է որպես Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի հանդեպ ժողովուրդների հարգանքի եւ հանդուրժողականության օր: Ինչպես հայտարարել է Բուենոս Այրեսի Հայկական ազգային կոնգրեսի տնօրեն Նիկոլաս Սարունյանը օրենքի վավերացումը ցուցադրում է Արզենտինայում դաշնային մակարդակով ժխտման դեմ պայքարելու ձգտումը:

Զնայած ամենօրյա աշխատանքով եւ սահմանին կանգնած զինվորի անասան արիությամբ կերտվող 25-ամյա մեր հպարտ անկախությանը, մենք դեռեւս անցումային խնդիրներ ունեցող երկիր ենք, որտեղ առկա տնտեսական եւ սոցիալական իրավիճակի բարելավման համար մեզ անհրաժեշտ են հասարակության եւ կառավարության միասնական ջանքեր: Իսկ դրա համար անհրաժեշտ են նոր մոտեցումներ, նոր սկիզբ:

Այդ պատճառով, ես որոշել եմ հրաժարական տալ եւ նոր կառավարություն ձեւավորելու հնարավորություն ընձեռել Նախագահին: Պետք է մտածել մեր բոլորի հաջողության մասին եւ շննս տալ նոր կառավարությանը՝ կատարված աշխատանքի հիման վրա եւ նոր մոտեցումներով համախմբելու հասարակությանը»:

Հիշեցնենք, որ Հովիկ Աբրահամյանը ՀՀ վարչապետի պաշտոնը զբաղեցնում է 2014-ի ապրիլի 13-ից: Նա այդ պաշտոնում փոխարինել էր Տիգրան Սարգսյանին, ով ներկայումս Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նախագահն է:

Մամուլի տեղեկությունների համաձայն, վարչապետի պաշտոնի համար քննարկվում է Երեւանի նախկին քաղաքապետ, «Հայրուսագազարդի» նախկին ղեկավար Կարեն Կարապետյանի թեկնածությունը: Ավելի ուշ Կարեն Կարապետյանը զբաղեցրել է «Գազարոմ մեթոնգիոնգազ» ընկերության տնօրենի տեղակալի պաշտոնը ռազմավարության եւ զարգացման հարցերով:

Համաշխարհային լրատվամիջոցներ. Հայաստանի վարչապետի հրաժարականը՝ երկրի քաղաքական ճգնաժամի ֆոնին

Հայաստանի վարչապետի հրաժարականը հետևեց երկրում քաղաքական ճգնաժամին եւ բողոքի զանգվածային ակցիաներին: Այսպիսի եզրակացության են հանգել համաշխարհային առաջատար լրատվական գործակալությունները՝ մեկնաբանելով Հովիկ Աբրահամյանի հրաժարականի յուրը, որի մասին հայտնի դարձավ սեպտեմբերի 8-ին Կառավարության նիստից հետո: Associated Press գործակալությունը հայտնում է, որ Հայաստանի վարչապետն իր հրաժարականի մասին հայտարարել է, ասելով, թե տեղը զիջում է համաձայնության կառավարությանը: Գործակալության փոխանցմամբ՝ սա սպասելի քայլ էր Երեւանում ոստիկանության ՊՊՉ զնդի գրավումից հետո: Ըստ որում նշվում է, որ վարչապետի հայտարարություններից պարզ չէ, թե ով կդեկլարի կառավարությունը:

Գերմանական dpa գործակալությունն իր հերթին նույնպես վարչապետի հրաժարականը կապում է երկրում ընդդիմադիր ցույցերի հետ: Ընդ որում, հեղինակները նշում են, որ Աբրահամյանի հավանական հաջորդը կլինի Երեւանի նախկին քաղաքապետ Կարեն Կարապետյանը, որը «սերտ կապեր ունի երկրի ղեկավարության հետ»:

Բրիտանական The Independent թերթը նույնպես հիշեցնում է բողոքի վերջին ցույցերի մասին: «Այս ամառը Երեւանում բողոքի ցույցերի թվով 4-րդ ամառն էր: Իշխանափոխության պահանջը շրջանցեց նախորդ բողոքի ցույցերը, որոնք ուղղված էին էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման, կենսաթոշակային բարեփոխումների եւ հասարակական տրանսպորտի սակագների բարձրացման դեմ», – ասված է հոդվածում:

Վարչապետի հրաժարականը տեղի ունեցավ տնտեսության զարգացման տեմպի անկման եւ բռնության աճի ֆոնին, կարծում է Reuters-ը: «Փորձագետների կարծիքով նոր կառավարությունը, ամենայն հավանականությամբ ժամանակակից բնույթ կկրի եւ վերջնականապես կձեւավորվի միայն 2017-ի խորհրդարանական ընտրություններից եւ 2018-ին Սերժ Սարգսյանի պաշտոնավարման երկրորդ ժամկետի հետո, երբ տեղի կունենա լիարժեք անցում կիսանախագահական համակարգից խորհրդարանական հանրապետության», – նշում է գործակալությունը:

17 դար անց. Տեխնիկական «հեղափոխություն» Արցախի «Ամարաս» վանքահամալիրում. որքա՞ն երկար կտևի

Նեղինակ՝ Վարդուհի Երանոսյան

ԼՂՀ Մարտունու շրջանում գտնվող Ամարաս վանական համալիրի Մուրթ Գրիգորիս եկեղեցու պատուհանները եվրո են: Դրանք 4-րդ դարի սկզբում կառուցված վանքին կապած մարդու ձեռքերի միակ մատնությունն են: Ամարաս վանական համալիրն այնքան միաձույլ է բնությանը, որ թվում է՝ անձեռակերտ է: Դարեր առաջ կառուցված շինությունը որքան որ հզոր է՝ տարիներն իրենցն արել են.

քանդվել են դեռևս 4-րդ դարում կառուցված վանական համալիրի շինությունները, եկեղեցու՝ պատերազմի ժամանակ կրակոցներից վնասված պատերը, մատուռը, որտեղ թաղված է Արցախի առաջին եպիսկոպոս Գրիգորիսը:



17 դար անց վանքը վերանորոգելու փորձերը աղավաղել են հնագույն շինության դեմքը, որը դեռևս 5-րդ դարի սկզբին երկրամասի խոշոր կրոնական կենտրոնն էր եւ հայոց գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի կողմից բացված հայկական առաջին դպրոցներից մեկը:

Հնագետ Համլետ Պետրոսյանն իր բացատրությունն ունի. պատմամշակութային կոթողի վերականգնման, վերանորոգման աշխատանքներով պարտադիր է, որ հատուկ մասնագետներ զբաղվեն, որոնք գիտեն նման պարագայում ինչպես պահպանել եկեղեցին ոչ միայն որպես շինություն, այլև մշակութային արժեք. «Հարմարավետությունը եւ ճարտարապետական ոճը պետք է այնպես համադրել, որպեսզի նման խնդիրներ չծագեն: Դրա համար կարիք չկա մեծ գիտելիքներ ունենալ, պետք է մասնագետ լինել: Ցանկացած այցելու, որ գնում տեսնում է այդ պատուհանները, հասկանում է՝ դրանք հարազատ չեն ավանդական ճարտարապետությանը: Մա խոսում է մասնագիտական դաշտի բացակայության մասին, եւ հենց այս պատճառով է, որ մշակութային ասպարեզում մենք այսպիսի խնդիրներ ունենք»:





Համաձայն Արցախի Թեմի պատասխանատուների բացատրության, վանքի հին պատուհանները օգտագործման համար անսպիտան են եղել և որոշվել է ժամանակավորապես տեղադրել մետաղապլաստե հիմքով պատուհաններ: Ճարտարապետ, Ամարասի ռեստավրատոր Մանուշակ Տիտանյանն էլ նշում է՝ հոգևորականների այս քայլն անընդունելի է և արդեն որոշում կա փոխել ոչ միայն եկեղեցու մետաղապլաստե պատուհանները այլև տանիքը, որը նախատեսվում է իրականացնել մոտ ապագայում: ԼՂՀ Էկոնոմիկայի նախարարությունից էլ հաստատում են՝ համապատասխան ցուցումներ արդեն տրվել են:

Պատկան մարմինների խոսքով, վանական համալիրի վերականգնման համար շուրջ 500 միլիոն ՀՀ դրամ է հարկավոր, ինչը հինգ անգամ գերազանցում է հուշարձանների պահպանության բնագավառին հատկացվող տարեկան ֆինանսավորումը: Վանական համալիրի ռեստավրատոր Մանուշակ Տիտանյանի խոսքով՝ համալիրն ամբողջական վերականգնման կարիք ունի, որի համար դեռ համապատասխան ֆինանսական միջոցներ չկան. հույսը բարերարներն են:

Քանի որ քաղաքացիական ճանապարհներով տարեկան մի քանի հարյուր գրոսաշրջիկ աշխարհի տարբեր անկյուններից գալիս են գոնե մեկ անգամ տեսնելու Ամարասը: Մինչ կվերականգնեն վանքի նախկին տեսքը, բազմաթիվ գրոսաշրջիկներ Ամարասը եվրոպատուհաններով կճանաչեն, նրանց հիշողության մեջ կմնան նաև 19-րդ դարի հսկա թթենիները, որոնց վրա դեռ մնացել են 25 տարի առաջ Արցախի ազատագրման համար մղվող պատերազմից մնացած հետքերը...

Ծիֆ. ԱՄՆ-ն պետք է Ադրբեջանին պատասխանատվության կանչի Արցախի դեմ ագրեսիայի համար

Ամերիկյան կոնգրեսական Ադամ Շիֆը շնորհավորել է Արցախի ժողովրդին անկախության 25-ամյակի կապակցությամբ: Facebook-ում հրապարակված ուղերձում Շիֆը նշել է, որ այս օրը հարկավոր է հիշել հանուն Արցախի անկախության կորսված կյանքերի մասին: «Չնայած անկախության 25 տարիների ընթացքում բազմաթիվ մարտահրավերներին՝

Լեռնային Ղարաբաղն անող տնտեսության ժողովրդավարական երկիր է»,- ընդգծել է կոնգրեսականը: Նա հիշեցրել է այս տարվա ապրիլին շփման գծում Ղարաբաղի դեմ Ադրբեջանի սանձազերծած ագրեսիայի մասին, որի ընթացքում բազմաթիվ զինվորականներ և խաղաղ բնակիչներ սպանվեցին:



«ԱՄՆ-ն պետք է հանդես գա վտանգավոր և ապակայունացնող ագրեսիայի դեմ, Ադրբեջանին պատասխանատվության կանչի, հետաքննի զինվորական հանցագործությունները», հակամարտության խաղաղ կարգավորում պահանջի»,- ասված է ուղերձում:

Քաշաթաղի շրջանում նոր բնակելի թաղամաս է բացվել

ԼՂՀ Քաշաթաղի շրջանում այսօր՝ սեպտեմբերի 3-ին, Աղավնո գյուղում Արիավան նոր բնակելի թաղամաս բացվեց: Նոր թաղամասում բնակարան ստացավ 16 ընտանիք, եւս 7-ն էլ կստանան իրենց բնակարանները փաստաթղթերը կարգավորելուց հետո:

Գորիս-Ստեփանակերտ ավտոճանապարհին՝ Աղավնո գետի մոտ գտնվող թաղամասի կառուցումը ֆինանսավորել է «Արի» հիմնադրամը: Ծինարարությունը տեղի է ունենում 3 փուլում: Երկրորդ փուլի ավարտին 25 բնակարաններից 10-ը կհատկացվի ՊԲ զինծառայողներին, 5-ը՝ ոստիկանության աշխատակիցներին:

Թաղամասի բացմանը ներկա էր նաև ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, վարչապետ Արայիկ Հարությունյանը, պաշտոնատար այլ անձինք:



Մահացել է Մատենադարանի տնօրեն Հրայա Թամրազյանը



Այս գիշեր 63 տարեկանում Սր. Գրիգոր Լուսավորիչի հիվանդանոցում մահացել է անվանի գիտնական, բանաստեղծ, թարգմանիչ, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ Հրայա Թամրազյանը:

Մատենադարանից հայտնեցին, որ Թամրազյանն ուներ ծանր հիվանդություն, երկար ժամանակ բուժվում էր:

Հայ գիտնական, բանաստեղծ, թարգմանիչ Հրայա Թամրազյանը ծնվել էր 1953թ. դեկտեմբերի 5-ին: 1977 թ. աշխատանքի է անցել Մատենադարանում՝ նախ որպես ավագ լաբորանտ, ապա կրտսեր ու ավագ գիտաշխատող: 1988-91 թթ. Հրայա Թամրազյանը աշխատել է «Սովետական գրող» հրատարակչությունում՝ որպես գլխավոր խմբագիր, իսկ 1991-93 թթ. զբաղեցրել է «Նաիրի» հրատարակչության տնօրենի պաշտոնը: 1993 թ. նշանակվել է ՀՀ կառավարությանն առընթեր Հրատարակչական գործերի վարչության պետ, իսկ 1995-1997 թթ. ղեկավարել է ՀՀ Տեղեկատվության նախարարությունը:

Հրայա Թամրազյանը 1997-2007 թթ. համատեղությամբ աշխատել է որպես «Նաիրի» հրատարակչության տնօրեն և Մատենադարանի ավագ գիտաշխատող: 1999 թ. ստացել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

2007 թվականից զբաղեցնում է Մատենադարանի տնօրենի պաշտոնը: 2014 թվականից Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ է: Թամրազյանը բազմաթիվ մենագրությունների և գիտական հոդվածների ու ուսումնասիրությունների հեղինակ է: Նրա ուսումնասիրությունները հիմնականում առնչվում են միջնադարագիտության մասնավորապես նարեկացիագիտության բնագավառին:

Հրայա Թամրազյանը արժանիորեն վաստակեց ողջ մտավորականության համակրանքը. Մերժ Սարգսյան

«Հ նախագահ Մերժ Սարգսյանն այսօր՝ սեպտեմբերի 3-ին, ցավակցական հեռագիր է հղել Թամրազյանների ընտանիքին՝ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի՝ Մատենադարանի տնօրեն, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, ճանաչված բանաստեղծ և թարգմանիչ Հրայա Թամրազյանի վաղաժամ մահվան կապակցությամբ:



«Հրայա Թամրազյանը իր ողջ գործունեությունը նվիրեց հայ ժողովրդի մշակութային ժառանգության, մասնավորապես՝ միջնադարագիտության և նարեկացիագիտության ուսումնասիրմանը և արժանիորեն վաստակեց իր գործընկերների, ընթերցողների և ողջ մտավորականության հարգանքն ու համակրանքը:

Խորին ցավակցություն եմ հայտնում ձեզ, ձեր հարազատներին, մերձավորներին և անվանի մտավորականի գործընկերներին», -ասված է ՀՀ նախագահի ցավակցական հեռագրում:

Հայաստանից ԼՂՀ երկրորդ ճանապարհի կապիտալ վերանորոգման համար 1,2 մլրդ դրամ կհատկացվի

Հայաստանից Լեռնային Ղարաբաղ երկրորդ ճանապարհի կապիտալ վերանորոգման համար 2016 թվականին կհատկացվի 1,2 մլրդ դրամ (մոտ 2,5 մլն դոլար. խմբ.): Այդ մասին որոշումն ընդունվել է Հայաստանի կառավարության սեպտեմբերի 2-ի նիստին:

Միջոցները կհատկացվեն կառավարության պահուստային ֆոնդից և կփոխանցվեն Տրանսպորտի նախարարությանը, իսկ այնտեղից՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նվիրատվության հիման վրա: Խճուղու երկարությունը 116 կմ է, այն կանցնի Մեւանա լճի հարավ-արևելյան ափին գտնվող վայրից՝ ԼՂՀ-ի հյուսիսային շրջաններով դեպի հանրապետության կենտրոն:

Կարեն Կարապետյանը նշանակվեց ՀՀ վարչապետ



ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն այսօր՝ սեպտեմբերի 13-ին, հրամանագիր է ստորագրել Կարեն Կարապետյանին ՀՀ վարչապետ նշանակելու մասին:

ՀՀ նախագահի մամուլի գրասենյակից հայտնում են, որ հրամանագրում, մասնավորապես, նշվում է.

«Ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 4-րդ կետով՝ ո ր ո շ ու մ է մ.

Կարեն Կարապետյանին նշանակել Հայաստանի Հանրապետության վարչապետ»:

Կարեն Կարապետյանը Հայաստանի Հանրապետության 14-րդ վարչապետն է: Նրա նախորդը՝ Հովիկ Աբրահամյանը, հրաժարական էր տվել 2016թ. սեպտեմբերի 8-ին՝ կառավարության ղեկավարի պաշտոնը ստանձնելուց 2 տարի 5 ամիս անց: Հովիկ Աբրահամյանն իր որոշումը բացատրել էր նրանով, որ իրեն չի հաջողվել վերացնել հասարակության բեռնացվածությունը:

Հիշեցնենք, որ ՀՀԿ խորհրդի նիստում Կարեն Կարապետյանը հայտարարել էր, որ մոտ ժամանակներս կներկայացնի երկրի զարգացման վերաբերյալ ծրագիր, որը կներառի նաև քայլեր ուղղված հասարակության վստահության մեծացմանը:

Կարեն Կարապետյանի կենսագրությունը

Ծնվել է 1963թ. օգոստոսի 14-ին:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1970-1980թթ. սովորել և ավարտել է Երևանի Լ. Տոլստոյի անվան միջնակարգ դպրոցը:

1980-1985թթ. սովորել և գերագանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը:

1989թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

2010թ. ստացել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան, ունի 32 գիտական աշխատանք:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1985-1996թթ. աշխատել է ՀՀ պետականի հաշվողական կենտրոնում, գիտության և մշակույթի գործիչների ասոցիացիայում: Միաժամանակ դասավանդել է ԵՊՀ-ում:

1996-1998թթ. աշխատել է «Հայէներգո» ՊԶ-ում որպես գլխավոր տնօրենի տեղակալ:

1998-2001թթ. աշխատել է «Հայէներգո» ՓԲԸ-ում որպես գլխավոր տնօրեն:

2001թ. նշանակվել է ՀՀ էներգետիկայի նախարարի տեղակալ:

2001-2010 թթ. եղել է «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ-ի վարչության նախագահ-գլխավոր տնօրենը:

2009թ. ՀՀԿ համամասնական ցուցակով ընտրվել է Երևան քաղաքի ավագանու անդամ:

2010-2011թթ. Երևանի քաղաքապետ:

2011-2016 թթ. «Գազպրոմբանկ» ԲԲԸ առաջին փոխնախագահ:

2013 թվականից «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՍԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» Խորհրդի անդամ:

Կարեն Կարապետյանը կներկայացնի երկրի զարգացման ծրագիր, որը բաղկացած կլինի երկու փուլից

ՀՀ վարչապետի թեկնածու Կարեն Կարապետյանը մոտ ժամանակներս կներկայացնի մեր երկրի զարգացման վերաբերյալ ծրագիր, որը բաղկացած կլինի երկու փուլից: Այդ մասին նա հայտնել է ՀՀԿ խորհրդի նիստում, որի ընթացքում քննարկել են նրա թեկնածությունը հավանություն տալու հարցը:

Կարեն Կարապետյանը շնորհակալություն է հայտնել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին և ՀՀԿ խորհրդի նիստի մասնակիցներին՝ վստահության համար: Նա հավաստիացրել է, որ ամեն ինչ կանի արդարացնելու այդ վստահությունը: Կարեն Կարապետյանը նաև շնորհակալություն է հայտնել վարչապետ Հովիկ Աբրահամյանին՝ նրա աշխատանքի համար:

ՀՀ վարչապետի թեկնածուն նշել է, որ մոտ ժամանակներս կներկայացնի մեր երկրի զարգացման վերաբերյալ ծրագիր, որը բաղկացած կլինի երկու փուլից: Առաջին փուլը կներառի այն հնարավոր արագ փոփոխություններն ու հաջողությունները, որոնք կարող են ինչ-որ առումով վստահություն և հավատ ներշնչել ծրագրի նկատմամբ, իսկ երկրորդ փուլը կլինի մեր երկրի հեռանկարային զարգացման տեսլականը: Կարեն Կարապետյանը նշել է, թե շնորհակալ կլինի բոլոր գործընկերներին, ովքեր կներկայացնեն իրենց առաջարկությունները և տեղեկացրել է, որ մոտ ժամանակներս պատրաստվում է հրավիրել գործընկերներին՝ տնտեսագետներին, գործարար աշխարհի ներկայացուցիչներին, խոշոր բիզնեսի ղեկավարներին ու բոլոր նրանց, ում թեման հետաքրքիր է՝ կլոր սեղանի շուրջ քննարկելու այդ ամենը:

Ելույթ է ունեցել նաև ՀՀԿ նախագահի տեղակալ, ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը: Նա նշել է, որ իր պաշտոնավարման անցած երկու տարիների ընթացքում, երբ իրեն վստահվեց կառավարության ղեկավարի պաշտոնը, թիմի հետ միասին փորձեց ամեն ինչ անել, որպեսզի հաղթահարվեն ներքին և արտաքին մարտահրավերները, որի մասին մանրամասն խոսել է նաև կառավարության այսօրվա նիստում: Հովիկ Աբրահամյանը նշել է, որ Կարեն Կարապետյանը, ում շատ լավ է ճանաչում և վստահ է նրա փորձի, ունակությունների ու գիտելիքների վրա, կշարունակի

կառավարության գործունեությունը՝ ամեն ինչ անելով, որպեսզի մեր երկիրը գնա առաջ, տնտեսությունը զարգանա, եւ ժողովուրդն ապրի բարեկեցիկ կյանքով:

Airbus-ը սկսել է Հայաստանից լազերային օպտիկա գնել



Airbus-ը սկսել է Հայաստանից լազերային օպտիկա գնել: Հունա-հայկական LT-Pyrkal համատեղ ձեռնարկության գլխավոր տնօրեն Գագիկ Բունիաթյանը թղթակցի հետ զրույցում նշեց, որ ֆրանսիական ավիաընկերությունը 2015 թվականից Հայաստանում փորձնական խմբաքանակ էր գնում, իսկ հետո սկսեց արդեն սերիական խմբաքանակ ձեռք բերել:

Ֆրանսիացիներին հետաքրքրել են լազերի պոմպային խցիկները՝ սարքեր, որոնցում լուսադիոդները հավաքում են լույսը, այնուհետեւ այն փոխանցում շափյուղայե բյուրեղներին, որը էներգիայով հազենալով սկսում է լազերային ճառագայթում կատարել:

Ընկերությունը սինթետիկ շափյուղայի հիմքով լազերային օպտիկական համակարգեր է արտադրում: Հայաստանում շափյուղան անեցվել է, սակայն ինչ-որ ժամանակ առաջ արտադրությունը դադարեցվեց: «Հույս ունենք, որ կվերականգնվի, որովհետեւ մեզ տեղական հումքը մտապես գոհացրել է», - հայտարարեց Բունիաթյանը:

Ընկերության սարքերն արտահանվում են Եվրոպա եւ ԱՄՆ, ինչպես նաեւ Հնդկաստան, Չինաստան, Կորեա, Ճապոնիա, փոքր քանակով՝ Ռուսաստան: Վերջին շրջանում աճում է կարծր լազերների համար ձեռնարկության արտադրած բաղադրամասերի պահանջարկը:

«Պարզվեց, որ լազերային տեխնիկայի շուկան կայուն էր վերջին տարիներին համաշխարհային տնտեսության տատանումների հանդեպ: Բացի այդ՝ այս ոլորտում դեռեւս չեն գործում չինական ընկերությունները, հետեւաբար՝ գնի հարցում ուժգին ճնշում չկա», - նշեց Բունիաթյանը:

Հայ ձեռնարկատեր. Ցանկանում եմ ԱՄՆ պաշտպանությանը կրկին հետաքրքրել մեր շափյուղաներով

Հայկական արհեստական շափյուղան կարող է նաեւ ԱՄՆ պաշտպանական շուկայում հայտնվել: Այս մասին ասել է «Բարձրջերմային բյուրեղներ» ընկերության գլխավոր տնօրեն Լեւոն Հովհաննիսյանը, որը Երեւանում մասնակցել է «Արտադրված է Երեւանում» ցուցահանդեսին:

Նա նշել է, որ մի քանի տարի առաջ իրեն է դիմել ամերիկյան Rubicon Technology ընկերությունը, որն զբաղվում է

արհեստական բյուրեղների անեցմամբ: Իրենց պատվիրել են արհեստական շափյուղայից պատրաստված հատուկ նշանակության պատուհաններ: Սակայն իրենք չեն կարողացել ստանալ պահանջվող մակերեսով թերթեր:



«Մենք բյուրեղները հորիզոնական ենք անեցնում՝ մեր հայրենակից, խորհրդային գիտնական Խաչատուր Բաղդասարյանի մեթոդով, որի աշակերտն եմ: Յուրաքանչյուր մեթոդ իր առավելություններն ունի: Այս մեթոդը թույլ է տալիս ստանալ սկավառակի տեսքով բյուրեղներ, ըստ որում՝ բավական մեծ մակերեսով եւ որակյալ՝ առանց պղպջակների: Ցավոք, այդ ժամանակ ես սեփական ընկերություն չունեի, բայց այժմ ես ցանկանում եմ ամերիկացիներին հիշեցնել համագործակցության հնարավորության մասին», - ասում է Հովհաննիսյանը: Նշենք, որ այս տարի ստեղծված այդ ընկերությունը վերջերս թույլտվություն է ստացել աշխատելու Երեւանի «Ալյանս» ազատ տնտեսական գոտում՝ ազատվելով մեծ թվով հարկատեսակներից:

«Ափսոսում եմ, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանում արհեստական շափյուղան ու կորունդը մատնվեցին անուշադրության: Կրկնակի եմ ափսոսում, քանի որ ԽՍՀՄ-ում բյուրեղների եւ օտիկայի ոլորտում Հայաստանը գլխավոր կենտրոններից մեկն էր: Մենք այնպիսի ականավոր գիտնականներ ունեինք, ինչպիսին էին Տեր-Միքայելյանը, Հարությունյանը, Բաղդասարովը: Կիրովականի (Վանաձոր) քիմկոմբինատը Միությունում սինթետիկ բյուրեղներ անեցնող ամենախոշոր արտադրողներից մեկն էր:

Նոր Հանրում գործարան ունեինք, որը մշակում էր այդ բյուրեղները: Շատ եմ ափսոսում, որ 90-ական թվականներին մեր արդյունաբերությունը չզարգացավ, քանի որ այդ տեխնոլոգիաները հետընթաց չեն ունեցել, հակառակը՝ զարգանում են: Համաշխարհային արդյունաբերության մեջ դրանք ավելի շատ են կիրառվում՝ օրինակ՝ բերենք հենց միայն այժմների ապակիները: Չինաստանն ընդամենը 10 տարի առաջ է նախաձեռնել բյուրեղների անեցումը: Իսկ հիմա աշխարհում ամենախոշոր արտադրողն է: Իսկ մենք մեր նախկին տեխնոլոգիաներով... Չինաստանից ինձ ասում են՝ արի մեզ մոտ, միասին գործ հիմնենք, համահիմնադիր կլինես: Բայց ես գիտեմ, թե հետո ինչ կլինի: Մի տարում նա կտիրանա ամբողջ տեխնոլոգիային, իսկ ես ավելորդ կդառնամ: Ավելի լավ է՝ ես ինչ-որ բան իմ երկրում ստեղծեմ», - ասում է Լեւոն Հովհաննիսյանը:

Հայ հաքերները ադրբեջանցի 1200 սպաների անձնական տվյալներ են հրապարակել



Հայ հաքերները ադրբեջանցի 1200 սպաների անձնական տվյալներ են հրապարակել:

«Մոնթե Մելքոնյան» կիրեռ բանակի տարածած հաղորդագրության մեջ ասվում է. «MMCA-ի թանկարժեք նվերը՝ Հայաստանի Հանրապետության անկախության 25 ամյակին:

Իսմբի կողմից իրականացված գործողությունների ընթացքում հասանելիություն է ստացվել 1200 ադրբեջանցի սպաների անձնական տվյալներին, որի մեջ ներառվում են՝ նույնականացման համարներ, հեռախոսահամարներ, բնակության հասցեներ և այլ անձնական տվյալներ:

Իսմբի, Noyer_1K, n0p_c0ntr01-ի կողմից իրականացված մեկ այլ գործողության արդյունքում հասանելիություն է ստացվել ադրբեջանական բանակներից մեկի հաճախորդների տվյալների բազային, որը ներառում է շուրջ 10,000 մարդու անձնական տվյալ....

Ծնորհավոր տոնդ Հայաստան!!!!!!»:

Հաքերները նաև 33 ադրբեջանական կայքեր են կոտրել:

Ներկայացվում են նաև հղումները, որտեղ գետեղված են այդ տվյալները:

Leaked Bank user's data (10000)

<https://ghostbin.com/paste/7fxao>

azerbaijan military & police officer personal infos download links

<https://ghostbin.com/paste/7f73t>

Military men personal info download links

<https://ghostbin.com/paste/4du29>

Hacked websites (33) links

<https://ghostbin.com/paste/qg3xb>

ԵՄ. Անհամբերությամբ սպասում ենք Հայաստանի հետ համաձայնագրի ստորագրմանը

Եվրամիությունը Հայաստանի Հանրապետությանը և հայ ժողովրդին շնորհավորել է անկախության հռչակման 25-ամյա տարեդարձի առիթով:

«Եվրոպական միություն անհամբերությամբ է սպասում ապագայում Հայաստանի հետ սերտ համագործակցությունը շարունակելուն», - նշված է ԵՄ մամուլի քարտուղարի հայտարարության մեջ:

Հայտարարության մեջ ԵՄ-ը խոստանում է շարունակել աջակցությունը ժողովրդավարական ինստիտուտների զարգացմանը, օրենքի գերակայությանը և տնտեսական բարգավաճմանը՝ հանուն Հայաստանի բոլոր քաղաքացիների:



«Մենք անհամբերությամբ ենք սպասում Հայաստանի և ԵՄ միջև ապագա համաձայնագրին, որը Արևելյան գործընկերության շրջանակում փոխգործակցության հետ մեկտեղ ԵՄ-ին հնարավորություն կտա ակտիվացնելու Հայաստանի իշխանությունների հետ երկխոսությունը՝ աջակցելու համար բարեփոխումների ուղղությամբ նրանց ջանքերին և ակտիվացնելու բնակչության հետ շփումները», - նշված է հայտարարության մեջ:

Չորահանդեսին ցուցադրվեցին զինատեսակներ, որոնք ձեռք են բերվել ՌԳ-ի կողմից տրամադրված վարկով. Մովսես Հակոբյան



Հայաստանի Հանրապետության անկախության 25-րդ տարեդարձի չորահանդեսին ցուցադրված զինատեսակների մեջ կային նաև այնպիսիները, որոնք ձեռք են բերվել ՌԳ-ի կողմից Հայաստանին տրամադրված 200 մլն դոլարի վարկով: Այս մասին այսօր՝ սեպտեմբերի 21-ին, լրագրողների հետ զրույցում ասաց ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ Մովսես Հակոբյանը:

«Եթե զինտեխնիկան մասնակցում է մեր չորահանդեսին, դրանք նաև մեր սեփականությունն են: Դրանց մեջ կան զինատեսակներ, որ ձեռք են բերվել պայմանագրի շրջանակում, կա նաև տեխնիկա, որ մեր միջոցներով ենք ձեռք բերել», - ասաց նա:

Հիշեցնենք, որ Երևանի Հանրապետության հրապարակում սեպտեմբերի 21-ին տեղի է ունեցել անկախության 25-ամյակին նվիրված չորահանդես:

Պետական հիմնի հնչյունների ներքո եւ գեներլի հինգ համազարկերի ներքո Երեւանի Հանրապետության հրապարակում զորահանդեսը մեկնարկեց զինվորական ստորաբաժանումների երթով, այնուհետեւ հրապարակ մտան տանկեր, զորահամբեմաներ եւ հրետանի: Դրանից հետո «Մու 25» գրոհիչ օդանավերը Երեւանի երկինքը զարդարեցին ազգային եռագույնի գույներով: Չորահանդեսն ավարտվեց Պաշտպանության նախարարության պատվավոր պահակախմբի վաշտի եւ միացյալ նվագախմբի շարերերթով:

Երեւանում զորահանդեսն իրարանցում է առաջացրել Ադրբեջանի Պաշտպանության նախարարությունում



Երեւանում անկախության 25-ամյակին նվիրված զորահանդեսը եւ դրա ընթացքում ներկայացված սպառազինությունը, ըստ երեւույթին, մեծապես անհանգստացրել են Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությանը:

Ըստ haqqin.az-ի հաղորդման, ԱՀ-ի Պաշտպանության նախարարությունում խորհրդակցություն է տեղի ունեցել նախարարության բարձրագույն ղեկավարության մասնակցությամբ: Դրա ընթացքում սահմանվել են Ադրբեջանի ՉՈՒ-ի առաջ կանգնած խնդիրները:

Ադրբեջանի համաձայն, խորհրդակցությանը նշվել է հետախուզական գործունեության ակտիվացման անհրաժեշտությունը «թշնամու տարածքում» նոր թիրախներ սահմանելու, դրանց նշանակությունը եւ ոչնչացման կարգը որոշելու համար: Չորքի բոլոր տեսակներին հանձնարարվել է ուժեղացնել աշխատանքի համակարգումն այդ ուղղությամբ:

«Նախարար Չաքիր Հասանովը հանձնարարել է վերահսկողություն սահմանել հակառակորդի ռազմավարական եւ ռազմական նշանակության օբյեկտների նկատմամբ, պատրաստ լինել անհրաժեշտության դեպքում դրանց օպերատիվ ոչնչացման», - հայտնում է ադրբեյրը:

Ռազմական փորձագետ. Չորահանդեսին ցուցադրվել է Հայաստանի նման երկրների համար բացառիկ սպառազինություն



Սեպտեմբերի 21-ին Երեւանում անցկացված Հայաստանի Անկախության 25-ամյակին նվիրված զորահանդեսը ցույց տվեց, որ երկրի ռազմաքաղաքական ղեկավարությունը հաջողությամբ է իրականացնում սպառազինությունը մեծացնելու խոստումը: NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում այսպիսի տեսակետ հայտնեց ռազմական փորձագետ Արկադի Գրիգորյանը:

«Ցուցադրվել է Հայաստանի նման երկրների համար բացառիկ սպառազինություն: Ցուցադրված նմուշներից որոշները նման երկրորդ օրինակներ չունեն», - նշեց փորձագետը:

Նրա խոսքով՝ օրինակ, հայկական բանակի սպառազինության մեջ եղած «Իսկանդեր» օպերատիվ-տակտիկական հրթիռային համալիր ունի միայն այն արտադրող երկիրը՝ Ռուսաստանը, իսկ դրան նման հրթիռային համալիրներ ունեն փոքր թվով երկրներ: Առաջին անգամ ցուցադրվեց նաեւ «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգը:

«Անկասկած, հատուկ ուշադրություն գրավեցին ցուցադրված ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցները, որոնք ժամանակակից պատերազմների պայմաններում կարեւոր նշանակություն ունեն», - նշեց փորձագետը:

Արևմտյան Հայաստան

Թուրք-քրդական բախումներից վնասված Դիարբեքի հայկական կաթոլիկ եկեղեցին վերանորոգվելու է



Թուրքիայի հիմնադրամների գլխավոր վարչությունը հայտնել է, որ բախումների հետևանքով վնասված Դիարբեքի հայկական կաթոլիկ եկեղեցին վերանորոգվելու է:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Դիարբեքի Սուրի շրջանում փողոց դուրս գալու արգելքներ սահմանելուց հետո քուրդ զինյալների ու թուրք զինվորականների միջև բախումների հետևանքով լքված վնասված հայկական կաթոլիկ եկեղեցու վերանորոգումը նախատեսվում է ավարտել մինչև 2018-ը:

Նշվում է, որ եկեղեցին պատկանում է հիմնադրամների գլխավոր վարչությունը, որն էլ հայտնել է եկեղեցին վերանորոգելու մասին:

Աքշեհիրի հայկական եկեղեցին եւ պատմական բաղնիքն ավերակ վիճակում են



Թուրքիայում ավերված վիճակում են գտնվում Աքշեհիրի հայկական եկեղեցին եւ Գյավուր անունը կրող պատմական բաղնիքը: Այդ մասին, ըստ Akunq.net-ի, հաղորդում են թուրքական լրատվամիջոցները:

Ըստ այդմ, Գյավուր անվամբ բաղնիքն արդեն քանդվելու վտանգի տակ է, իսկ պատմական եկեղեցու պատերին մեծ ճաքեր են առաջացել: Սույն եկեղեցու վերականգնման ուղղությամբ տարիներ շարունակ ոչ մի զարգացում չի արձանագրվել, եկեղեցի, որի սեփականության վկայականը պատկանում է Աքշեհիրի քաղաքապետարանին:

Աքշեհիրում 19-րդ դարում տեղի հայկական համայնքի կողմից կառուցված եւ հետագայում ժամանակ առ ժամանակ մշակութային միջոցառումների նպատակով օգտագործված այս եկեղեցին այդպես էլ չի վերականգնվել թուրքական իշխանությունների կողմից՝ չնայած բազմիցս տրված խոստումներին:

Ինչպես ընդգծվում է հրապարակման մեջ, պատմական եկեղեցին եւ Գյավուր կոչվող բաղնիքն անհետ կորչելու վտանգի տակ են:

Թուրքիայում ավերվել է Քղիի վերջին հայկական եկեղեցին



Թուրքիայի Քղի գավառի Աչքբայունեյ (Միվգելիք) գյուղի Սուրբ Փրկիչ հայկական եկեղեցին լքված վնասվել է անցյալ տարվա դեկտեմբերին տեղի ունեցած երկրաշարժից:

Ինչպես տեղեկացնում է Akunq.net-ը, 2015 թ. դեկտեմբերի 3-ին 5.5 մագնիտուտ ուժգնությամբ երկրաշարժից տուժել են նաև հիշյալ գյուղի 35 տներ:

Ըստ աղբյուրի՝ գյուղի հայկական անվանումը Սերկելի է: Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո սույն գյուղի անունը եւս թուրքացվում է եւ նախ վերածվում Միվգելիքի, ապա՝ դառնում Աչքբայունեյ:

Գյուղի Սուրբ Փրկիչ հայկական եկեղեցին կառուցվել է 1139 թվականին, իսկ 1867 (1870) թ.՝ վերականգնվել կարինցի (երգրում) Կարապետ աղա Մուրադյանի և նրա բարեգործ տիկնոջ՝ Հուրիսայի միջոցներով: Մինչև 1915 թ. Ցեղասպանությունը եկեղեցու հարևանությամբ գործել է նաև հայկական դպրոց:

Աղբյուրի համաձայն՝ գյուղում մինչ օրս հավատում են, որ լուսնոտությամբ տառապող հիվանդներին հնարավոր է բուժել սույն եկեղեցում գտնվող անկողնում:

Ուղիղ 61 տարի առաջ այս օրը Թուրքիայում կոտորում եւ թալանում էին հայերին ու հույներին

Հեղինակ՝ Անդրանիկ Իսախրյան



Ուղիղ 61 տարի առաջ՝ 1955-ի սեպտեմբերի 6-7-ը, Ստամբուլում եւ Իզմիրում կազմակերպված կոտորում, թալանում եւ բռնաբարում էին հայերին եւ հույներին: Իսկ պետությունը հանգիստ հետևում էր իր կազմակերպածին:

Հիշյալ դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թուրք խուժանի գանգվածային ջարդարարությունը եւ թալանը լավ կազմակերպված էր, իսկ թուրքական իշխանությունը այք փակեց դրա վրա՝ թողնելով, որ մարդասպանները Ստամբուլը մաքրեն ազգային փոքրամասնություններից՝ հույներից եւ հայերից:

Թուրք խուժանին, իրենց արյունոտ գործն սկսելու համար առիթ էր պետք, եւ այդ առիթն էլ ստեղծեցին: Հունական կառավարության կողմից Սալոնիկում թուրքերին նվիրաբերած «Աթաթուրքի տուն թանգարան»-ի բակում ինչ որ պայթուցիկի տեղադրումը, որն ընդամենը թանգարանի ապակիներն էր կտրել, առիթ հանդիսացավ թուրքերի համար: Թուրքիայի պետական ռադիոկայանը տեղեկացրեց, թե հույները Աթաթուրքի տան մեջ ռումբ են պայթեցրել: Վարչապետի մտերիմներից մեկի կողմից հրատարակվող Istanbul Ekspres-ը կեսօրից հետո զարմանալի արագությամբ, հասցրեց մոտ 300 հազար տպաքանակով համար հրատարակել, որը պետության կողմից ստեղծված եւ հովանավորվող «Կիպրոսը թուրք է» միության անդամները բաժանեցին ժողովրդի մեջ:

Ամեն ինչ ընթանում էր ըստ պլանավորածի: Հայերի, հույների եւ մյուս ազգային փոքրամասնությունների տները, խանութներն ու տաղավարները արդեն հատուկ գույներով նշագրել էին՝ հեշտությամբ ջարդելու ու թալանելու համար:

Թուրքերի վայրագությունների ընթացքում սպանվել էր 16 հոգի, որոնցից երեքը հայտնաբերվել էին պարկի մեջ այրված: Վիրավորվել էին 500-ից ավել քրիստոնյաներ: Ընդհանուր հաշվով՝ թալանի էր ենթարկվել 4214 տուն, 1004 գրասենյակ, 73 եկեղեցի, 26 դպրոց եւ այլ հաստատություններ:

Հաստատելու համար, որ այս գանգվածային ջարդերը կազմակերպված են եղել թուրքական պետության կողմից, ինչպես 1915-ի Հայոց ցեղասպանությունը՝ ներկայացնենք թուրքական Atılım կայքի հրապարակումը, որտեղ նշվում է, որ Սալոնիկի Աթաթուրքի տան բակի պայթյունը կազմակերպած Օրթայ Էնգինը, Հունաստանում պայթյունը կազմակերպելու համար մեկ տարի պատիժը կրելուց հետո

ազատ է արձակվել եւ տեղափոխվել Թուրքիա, որտեղ էլ սկսվել է իր կարիերայում աննախադեպ վերելքը (նախ, Թուրքիայի կարեւորագույն շրջաններից մեկի՝ Չանքայայի քայմաքամ, այնուհետ՝ ոստիկանության գլխավոր վարչության քաղաքական գործերով բաժնի պետ): 1971-ին Օրթայը դառնում է Անվտանգության վարչության պետ եւ 7 տարի պաշտոնավարում: Իսկ 1991-ին նշանակվում է Նեւշեհիրի նահանգապետ:

ԱՄՆ-ի Ստամբուլում հյուպատոս Արթուր Ռիչարդը, ԱՄՆ պետքարտուղարություն ուղարկած հաղորդագրության մեջ նշել է, թե ականատես է եղել, որ թուրքական ոստիկանությունը ոչինչ չէր անում կանխելու վայրագությունները:

1955-ի ջարդերից տարիներ հետո, Թուրքիայի հատուկ նշանակության զինուժերի նախկին պետ Սաբրի Յիրմիրբեշոլուն նշել է, թե 1955-ի սեպտեմբերի 6-7-ը հատուկ նշանակության զինուժերի գործն էր, որը հրաշալի կազմակերպվել էր:

Իսկ վերջում հիշեցնենք Թուրքիայի նախկին պաշտպանության նախարարի մի առիթով ասված խոսքը. «Եթե հայերը եւ հույները Թուրքիայում մնային, արդյոք. մենք այսպիսի ազգային պետություն կլինեինք»:

Թուրքիայում քրդերենով կնոջ սեռական օրգանի անունը հիշեցնող գյուղի անունը փոխել են հայկական անունով



Թուրքիայում Միվաս (Մերաստիա-խմբ) նահանգի գյուղերից մեկի բնակիչների բողոքի հիման վրա փոխվել է գյուղի անունը:

Թուրքական BirGun կայքի փոխանցմամբ՝ Միվասի Քուզ գյուղի բնակիչները դիմել են իշխանություններին՝ պնդելով, որ իրենց գյուղի անունը քրդերենով կնոջ սեռական օրգան է նշանակում, ինչի պատճառով հարեւան գյուղերի բնակիչները մշտապես ծաղրում են իրենց:

Տեղի իշխանությունները հաշվի են առել ստեղծված իրադրությունը եւ գյուղի բնակիչների պահանջով գյուղը անվանակոչել են նախկին հայկական անունով՝ Ծմակ, քանի որ երկար տարիներ գյուղացիները շարունակում են իրենց գյուղը անվանել հենց Ծմակ:

Վանի բերդը ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկ



Արարատյան թագավորության հայտնի բերդերից համարվող Վանի բերդը ներառվել է մշակութային համաշխարհային ժառանգության (ՅՈՒՆԵՍԿՕ) ժամանակավոր ցանկում:

Թուրքական TRT-ի փոխանցմամբ՝ Թուրքիայից ՅՈՒՆԵՍԿՕ-ի ժամանակավոր ցանկ են ներառվել մի շարք բերդեր, կամուրջներ ու մզկիթներ:

Ներառվածների մեջ առանձնանում են Վանի բերդն ու Սասունի Փրե Բաթմանի հայտնի կամուրջը:

Նշենք, որ Վանի բերդը հիմնադրել է Սարգուրի Առաջինը Ք. Ա. 835-825 թվականներին:

Թուրքիայում 40 տարի մարզադահլիճ ծառայող հայկական եկեղեցին գրադարան է դառնալու



Կայսերիի (Կեսարիա-խմբ) քաղաքապետարանն աշխատանքներ է սկսել 40 տարի որպես մարզադահլիճ ծառայած հայկական բողոքական Սուրբ Աստվածածին եկեղեցին որպես գրադարան փոխելու աշխատանքները:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Կայսերիի քաղաքապետարանը որոշել է Սուրբ Աստվածածին եկեղեցին դարձնել քաղաքային բաց գրադարան, որն աշխատելու է 24 ժամ: Նախատեսվում է, որ գրադարանում լինելու է 50 հազար գիրք:

Դիարբեքիի հայկական եկեղեցին պետականացնելու դեմ դատական հայց է ներկայացվել



Թուրքիայի քրդաբնակ Դիարբեքիի Սուրի շրջանում գտնվող հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցու հիմնադրամբ եկեղեցու պետականացումը չեղյալ հայտարարելու համար դիմել է դատարան:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Դիարբեքիի Սուրբ Կիրակոս եկեղեցու հիմնադրամի փաստաբաններից Ալի Էլբեյոլուն նշել է, որ եկեղեցու պետականացումը չեղյալ հայտարարելու համար դատական հայց է ներկայացվել վարչապետի աշխատակազմի եւ Քաղաքաշինության նախարարությունների դեմ:

Փաստաբանը շեշտել է, որ եկեղեցու պետականացումը հակասում է մշակութային ժառանգության պահպանության օրենքին, միջազգային համաձայնագրերին, այդ թվում Լոզանի համաձայնագրին:

Նշենք, որ Թուրքիայի նախարարների խորհրդի որոշումով Դիարբեքիի Սուրի շրջանում գտնվող բոլոր կառույցները, այդ թվում Դիարբեքիի Սուրբ Կիրակոսը, պետականացվել են:

Մերձավոր Արեւելքի ամենամեծ եկեղեցիներից մեկի՝ Սուրբ Կիրակոսի վերաբացումն ու օծումը տեղի է ունեցել 2011-հոկտեմբերի 22-ին, իսկ առաջին պատարագը մեկ օր անց՝ հոկտեմբերի 23-ին:

Սուրբ Կիրակոսի վերանորոգումը իրականացվել է դիարբեքիցի հայերի եւ Դիարբեքիի քաղաքապետարանի աջակցությամբ:

Սուրբ Կիրակոսը վերաբացվել է որպես գործող եկեղեցի:

Օրամայի վարչակազմն իր մտահոգությունն է հայտնել

Թուրքիայի իշխանություններին՝ Սբ. Կիրակոս եկեղեցու հարցով

ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի վարչակազմն իր մտահոգությունն է հայտնել Թուրքիայի իշխանություններին՝ Դիարբեքիի նահանգում Սուրբ Կիրակոս եկեղեցու պետականացման կապակցությամբ: Այս մասին հայտնում է **Asbarez**-ը:

Նշվում է, որ ԱՄՆ Հայ դատի հանձնախումբը դիմել է ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի վարչակազմին եւ իր մտահոգությունը հայտնել Դիարբեքիի Սուրբ Կիրակոս եկեղեցու պետականացման հարցով: Հայ դատի

հանձնախումբն այդ կապակցությամբ դիմել է ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի վարչակազմին, եւ համապատասխան պաշտոնյայից պատասխան ստացել, որ Անկարայում ԱՄՆ դեսպանատունն ու Ադանայում հյուպատոսարանը ուշադիր հետեւում են Թուրքիայի նախարարների խորհրդի այդ որոշմանը եւ վերջին օրերին բարձրացրել են այդ հարցը տեղական եւ պետական իշխանության մարմիններում: Թուրքիայի կառավարությունը ԱՄՆ-ին տեղյակ է պահել հոգեւոր շինությունները պետականացնելու որոշման մասին՝ «որպես բյուրոկրատական միջոց մարտական գործողությունների ընթացքում վնասված կառույցները վերանորոգելու համար»: Պաշտոնյան նշել է, որ տեղական դատարաններում արդեն հայցեր են ներկայացվել այս որոշման դեմ:

Հիշեցնենք, որ Թուրքիայի քրդաբնակ Դիարբեքիր նահանգի Սուրի շրջանում գտնվող հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցին նախարարների խորհրդի որոշումով պետականացվել էր: Թուրքիայի նախարարների խորհրդի որոշումով պետականացվել են Դիարբեքիրի Սուրի շրջանում գտնվող բոլոր կառույցները, այդ թվում Դիարբեքիրի Սուրբ Կիրակոսը:

Միյուռք

Լոս Անջելեսի Գրանդ-պարկում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձան կտեղադրվի



Լոս Անջելեսի կենտրոնում գտնվող Գրանդ-պարկում կտեղադրվի Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձան: Լոս Անջելեսի շրջանային խորհրդի ղեկավար Մայքլ Անտոնովիչը հուշարձանը կբացի հոկտեմբերի 17-ին, հայտնում է Asbarez թերթը:

Հուշակոթողը, որի հեղինակը քանդակագործ Վահան Թոմասյանն է, պատրաստված է Արարատյան դաշտավայրից բերված սև տուֆից: Այն երկու մասի է բաժանված՝ որպես Հայոց ցեղասպանությանը հետևեաժ հոգեւոր եւ ֆիզիկական բեկման խորհրդանիշ:

Հեղինակի խոսքով՝ հուշարձանն այնպես է քանդակվել, որ քարերը մեկի մյուսի վրա են տեղադրվում 4, 24, 19, 15 աստիճան անկյամբ, որը խորհրդանշում է 1915 թվականի ապրիլի 24-ը:

Ստամբուլի Սուրբ Գեորգ եկեղեցու պատասխանատուն խոսել է Ստամբուլի հայ համայնքի խնդիրներից



Ստամբուլի Սամաթիա թաղամասի Սուրբ Գեորգ եկեղեցու ղեկավար խորհրդի նախագահ Եսայի Դեմիրը մանրամասն ներկայացրել է ստամբուլահայ համայնքի խնդիրները:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Սուրբ Գեորգ եկեղեցու ղեկավար խորհրդի նախագահ Եսայի Դեմիրը նշել է, թե 2015-ին ստամբուլահայ համայնքում գրանցվել է 647 մահ, 142 պսակադրություն եւ 120 մկրտություն: Նա այս թվերի հետ կապված մտահոգություն է հայտնել՝ շեշտելով, որ ամեն տարի ստամբուլահայ համայնքը պակասում է 500-ով:

Եսայի Դեմիրը խոսել է նաև եկեղեցու հիմնադրամի ֆինանսական դրությանը՝ հայտնելով, որ վերջին շրջանում քաղաքական բարդ իրավիճակի պատճառով հիմնադրամի բյուջեն 1 մլն-ից 1,5 մլն լիրայի պակասորդ է տվել:

Ուկրաինական Վիննիցայում Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված խաչքար է բացվել



Վիննիցայում տեղի է ունեցել Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված հիշատակի խաչքարի բացում եւ օծում, հայտնում է [Analitikaua](#)-ն:

Խաչքարը, որը տեղադրվել է Սուրբ Հարության տաճարի կողքին, օծել է Հայ առաքելական եկեղեցու Ուկրաինայի թեմի առաջնորդ, եպիսկոպոս Մարկոս Հովհաննիսյանը:


Ուկրաինայի հայերի միության գործադիր տնօրեն Դավիթ Մկրտչյանը հայտնել է, որ բացման արարողությանը ներկա են եղել քաղաքային իշխանության, ուղղափառ եկեղեցու, Ուկրաինայի հայերի միության, Վիննիցայի եւ երկրի այլ շրջանների հայ համայնքների, շրջանի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ, քաղաքի բնակիչներ:

Իր ելույթում «Վիննիցիայի հայկական սփյուռք» շրջանային կազմակերպության նախագահ Սամվել Եղոյանը պատմել է խաչքարի եւ նրա նշանակության մասին:

Ավելի վաղ հաղորդվել էր, որ Ուկրաինայի հայերի միության ղեկավար Վիլեն Շատվորյանը Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում հանդես էր եկել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված խաչքարերի տեղադրման նախաձեռնությամբ:

Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված խաչքարեր են տեղադրվել Նիկոլաեւում, Պոլտավայում, Դնեպրոպետրովսկում, Կիրովոգրադում, Ուժգորդում, Բերեժանիում, Իսմելնիցկիում, Չեռնիգովում, Սլավուտիչում (Կիււի մարզ) եւ Ռայկիում (Ժիտոմիրյան մարզ): Բսկ Խարկովում Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր է բացվել: Այլ շրջաններում Հայոց ցեղասպանությանը նվիրված բանաձեւեր են ընդունվել:

Մահացել է Թուրքիայի հայ կաթոլիկ համայնքի առաջնորդ արքեպիսկոպոս Հովհաննես Չոլաքյանը



97 տարեկանում մահացել է Թուրքիայի Հայ կաթողիկե համայնքի վաստակաշատ հոգևոր առաջնորդ արքեպիսկոպոս Հովհաննես Չոլաքյանը, այս մասին հաղորդում է «Ակոս» թերթը:

Չոլաքյանը 78 տարի Թուրքիայի հայ կաթողիկեների առաջնորդի պաշտոնն էր զբաղեցնում:

Չոլաքյանի համար սեպտեմբերի 21-ին եւ 22-ին տեղի ժամանակով 15.00-ից 17.00-ն, Ստամբուլի Բեյոզլու թաղամասի Սուրբ Աստվածածին եկեղեցու սրահում հոգեհանգստի արարողություն է կայանալու:

Չոլաքյանի հուղարկավորությունը տեղի է ունենալու սեպտեմբերի 23-ին, Թաքսիմ թաղամասի Սուրբ Հովհաննես Ոսկերեբն եկեղեցուց:

Միջազգային

Լեռնային Ղարաբաղի անկախությունը անվիճելի եւ անշրջադարձ է. Ֆրանսուա Ռոշբլուան



Լեռնային Ղարաբաղի անկախության 25-րդ տարեդարձի կապակցությամբ Ֆրանսիա-Ղարաբաղ Բարեկամության Շրջանակն իր աջակցություն է հայտնում Հարավային Կովկասի երիտասարդ Հանրապետությանը եւ ժողովրդավարական ուղուն, որով այն զարգանում է:

Բարեկամության Շրջանակը ջերմորեն ողջունում է Ղարաբաղի բնակչության վերգտած 25-ամյա ազատությունը, որն իրականացվեց 1991 թվականի սեպտեմբերի 2-ին Հանրապետության հռչակմամբ: Վերջինս հղում է իր ջերմ քաջալերանքը՝ շարունակելու այն ջանքերը, որոնք ձեռնարկվել են երջանիկ ապրելու բնական իրավունքի լիարժեք իրականացումն ապահովելու համար:

Շրջանակն ընդգծում է, որ, չնայած Անկախության հռչակագրին հաջորդած պարտադրված պատերազմին, «այժմ արդեն դարաբաղցիների մի ամբողջ սերունդ է մեծացել անկախ Հանրապետությունում, ով մեկ վայրկյան անգամ չի պատկերացնում հայտնվել այն ենթակա վիճակում, որ ավագ սերունդն է ապրել»:

Բարեկամության Շրջանակը համարում է, որ այս անկախությունը շոշափելի ձեռքերում է՝ այսուհետ անվիճելի եւ անշրջադարձ»:

«Մենք աջակցում ենք Լեռնային Ղարաբաղի անկախությանը, քանի որ աջակցում ենք միջազգային իրավունքին», - հայտարարել է Շրջանակի նախագահ Ֆրանսուա Ռոշբլուանը՝ շարունակելով. - «բայց ստկապես այն պատճառով, որ մենք պաշտպանում ենք մասնավորապես կյանքի եւ անվտանգության անօտարելի իրավունքը»:

Բարեկամության Շրջանակը համարում է, որ 2016 թվականի ապրիլին Բաքվի ռեժիմի կողմից իրականացված հարձակումները վկայում էն են աղբրեջանական սպառնալիքի շարունակականությունը տարածաշրջանի խաղաղության եւ անվտանգության համար: Շրջանակը նաեւ կարծում է, որ այս հարձակման փորձի ձախողումը, ինչպես նաեւ դարաբաղյան կողմի չափավոր ռազմական արձագանքը ցույց են տալիս Լեռնային Ղարաբաղի իշխանությունների հասունությունը եւ պատասխանատվության զգացումը:

«Քառօրյա այս պատերազմը կատարյալ ձեռով ցույց տվեց, թե ինչքան Լեռնային Ղարաբաղի անրապետությունը մտահոգված է իր քաղաքացիների կյանքի անվտանգությամբ», - նշել է Ֆրանսուա ոչբլուանը շնորհավորական իր ուղերձում եւ ավելացրել՝ եզրափակելով իր խոսքը- «աջակցել Լեռնային Ղարաբաղին նշանակում է աջակցել ժողովրդավարությանը, իսկ աջակցել ժողովրդավարությանը շանակում է աջակցել խաղաղությանն ու բարգավաճմանը»:
Անկախության տոնի կապակցությամբ Ֆրանսիա-Ղարաբաղ Բարեկամության Շրջանակը վերահաստատում է միջազգային հանրության կողմից ԼՂՀ անվերապահ ճանաչման իր կոչը:

Ֆրանկ Էնգել. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունն այլընտրանք չունի



Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը այլընտրանք չունի: Այս մասին սեպտեմբերի 2-ին Facebook-ի իր էջում գրել է Եվրախորհրդարանի պատգամավոր Ֆրանկ Էնգելը:

Նրա խոսքով, անցել է 25 տարի այն ժամանակվանից, երբ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը հռչակել է իր անկախությունը: «Ինստիտուցիոնալ զարգացման, ժողովրդավարության ամրապնդման ու սոցիալական առաջընթացի քառորդ դար: Շնորհավոր ծննդյան օրդ, Արցախ: Անկախությունն այլընտրանք չունի», - շեշտել է Ֆրանկ Էնգելը:

Ավստրալիայի խորհրդարանի պատգամավորը պատմել է իր հայկական արմատների մասին

Ավստրալիայի խորհրդարանի նոր պատգամավոր Թիմ Ուիլսոնը նորընտիր խորհրդարանի առաջին նատաշջանում ելույթ ունենալիս պատմել է իր հայկական արմատների մասին:

Խորհրդարանում իր առաջին ելույթի ժամանակ պատգամավորը, ինչպես դա ընդունված է Ավստրալիայում, պատմել է իր մասին: Նա հիշատակել է իր մորական պապին,

որը վերապրել էր Ցեղասպանությունը, փոխանցում է Ավստրալիայի հայ դատի հանձնաժողովը:

«Մորական պապս վերապրել է իր ժողովրդի ցեղասպանությունը: Ես նրան չեմ տեսել, քանի որ նա մահացել էր նախքան իմ ծնվելը: Բայց ես նրան դեռ ամեն օր տեսնում եմ, երբ նայում եմ հայելու մեջ եւ տեսնում մուգ եւ խորը աչքեր», - ասել է Ուիլսոնը:

Թուրքիայում ձերբակալվել են Հայոց ցեղասպանությունը ճանաչող հայտնի թուրք մտավորականներ



Թուրքիայում հեղաշրջման փորձի գործի շրջանակներում ձերբակալվել են հայտնի մտավորականներ Ահմեդ Ալթանը եւ նրա եղբայր՝ Մեհմեդ Ալթանը:

Թուրքական Cumhuriyet պարբերականի փոխանցմամբ՝ Ստամբուլի դատախազության ասիստենտի հարցերով դատախազ Ջան Թունջայի հրահանգով Ստամբուլում ձերբակալվել են Taraf պարբերականի նախկին գլխավոր խմբագիր Ահմեդ Ալթանը եւ պրոֆեսոր Մեհմեդ Ալթանը:

Ձերբակալվածները մեղադրվում են ռազմական հեղաշրջման փորձ իրականացնողներին աջակցելու մեջ:

Նշենք, որ ձերբակալված երկու մտավորականներն էլ Թուրքիայում Հայոց ցեղասպանության ճանաչման ակտիվ կողմնակիցներից էին ու բազմաթիվ հոդվածներ են գրել Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտության մասին:

Կոսովոյի դպրոցական քարտեզներում Վանը, Մուշը եւ Էրզրումը Հայաստանի կազմում են թուրքերը կատաղել են

Թուրքիայում մեծ սկանդալ է առաջացրել Կոսովոյի դպրոցներին բաժանված քարտեզները, որտեղ Հայաստանը ներկայացված է հին սահմաններով:

Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ սկանդալի առիթ դարձած դպրոցական ուսումնական քարտեզները Կոսովոյի դպրոցներին են բաժանել մի քանի ընկերություններ, որոնք նշել են, որ քարտեզները ստացել են Ալբանիայից:

Թուրքերին կատաղեցրել է, որ Թուրքիայի փոխարեն քարտեզում նշված է Հայաստանը՝ Վանը, Կարսը, Մուշը Էրզրումը ներառյալ եւ Քուրդիստանը:



Հասարակական

Այրիլյան պատերազմը պետք է կարծրացնի մեր մոտեցումները ԼՂ կարգավորմանը, այլ ոչ թե թուլացնի. Ռոբերտ Քոչարյան



Այրիլյան պատերազմը պետք է կարծրացնի մեր մոտեցումները կարգավորմանը, այլ ոչ թե թուլացնի: Այս մասին «Ազատություն» ռադիոկայանին տված բացառիկ հարցազրույցում նշել է ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

Ինչպե՞ս եք գնահատում ռազմական, դիվանագիտական զարգացումները Լեռնային Ղարաբաղի շուրջ՝ տարածաշրջանային ընդհանուր գործընթացների համատեքստում:

Այսօր մենք ականատեսն ենք դառնում մի շարք անբարենպաստ գործոնների կուտակման, ինչը լուրջ անհանգստություն է առաջացնում: Ռուսաստանյան զենքի մատակարարմամբ ռազմական հավասարակշռության խախտումը, ԼՂ հարցով միջազգային կազմակերպությունների մի քանի տհաճ բանաձեւերը եւ զեկույցները, Ադրբեջանի նախաձեռնությամբ տարածաշրջանային համագործակցության նոր ֆորմատի ձեւավորումը (իհարկե՛ առանց Հայաստանի), մեր երկիրը շրջանցող «Հյուսիս-Հարավ» տրանսպորտային միջանցքի ստեղծումը: Տեղի ունեցողի աշխարհաքաղաքական հետեւանքները երկարատեւ բացասական ազդեցություն են ունենալու երկրի տնտեսության, միջազգային եւ տարածաշրջանային գործերում մեր կշռի ու ազդեցության եւ

իհարկե՛ ԼՂ հարցով բանակցային գործընթացի մեջ ներգործելու մեր ռեսուրսի վրա: Իշխանությունները պետք է կարողանան վերլուծել կատարվողի պատճառները եւ գործուն բանաձեւ գտնել՝ հակազդելու ձեւավորված մատրահրավերներին: Ընդ որում, իրավիճակը կարգավորելու համար մենք շատ ժամանակ չունենք:

Վերջերս լրատվամիջոցներում, սոցիալական ցանցերում շատ է խոսվում դարաբաղյան կարգավորման մի տարբերակի մասին, ըստ որի, Ադրբեջանին «հողեր, շրջաններ հանձնելու» դիմաց Լեռնային Ղարաբաղին տրվելու է միջանկյալ կարգավիճակ: Ի՞նչ կարող եք ասել այս կապակցությամբ:

Ես ծանոթ չեմ միջնորդների՝ կարգավորման առաջարկի վերջին տարբերակի հետ, այդ պատճառով բուն փաստաթղթի քննարկումը կոռեկտ չեմ համարում: Սակայն, դատելով հակամարտող կողմերի պաշտոնյաների հայտարարություններից, ինչպես նաեւ մերձիշխանական ՉԼՄ-ների բազմաթիվ հրապարակումներից, կողմերի մոտ զիջումների գնալու պատրաստակամությունը խիստ անհամաչափ է:

Հայկական կողմի մոտ այդ պատրաստակամությունը չափից դուրս շեշտադրված է, միեւնույն ժամանակ, Ադրբեջանում մեզ համար սկզբունքային հարցերի վերաբերյալ զիջումների գնալու նույնիսկ ակնարկներ չկան: Այս իրավիճակը վրդովեցնում է հասարակությանը Հայաստանում եւ Արցախում, բացասական սպասումներ առաջացնում բանակցություններից եւ կարող է պարտվողական տրամադրությունների պատճառ դառնալ:

Հիմա՝ բանակցային գործընթացի վերաբերյալ: Իմ նախագահության 10 տարիների ընթացքում միայն մեկ անգամ՝ Քի Ուեսթում, մենք իրականորեն մոտ ենք եղել փաստաթղթի ստորագրմանը, ինչը տեղի չունեցավ Ադրբեջանի հրաժարման պատճառով՝ փաստորեն հենց ստորագրման արարողության ժամանակ: Դա փաթեթային եւ համապարսիակ կարգավորում էր, որը հիմքում ուներ ԼՂՀ միավորումը Հայաստանին եւ ենթադրում էր տարածքների վերադարձ, ինչպես նաեւ անվտանգության ապահովման ուղղությամբ համալիր միջոցների կիրառում:

Այնուհետ հայտնվեցին «մադրիդյան սկզբունքները», որոնք միայն մասամբ էին ընդունելի մեզ համար, քանի որ ճանաչում էին ԼՂՀ ինքնորոշման իրավունքը: Բայց դա ոչ թե ստորագրման համար նախատեսված փաստաթուղթ էր, այլ սկզբունքներ էին, որոնք, միջնորդների կարծիքով, պետք է հիմք հանդիսանային ապագա համաձայնագրի համար: Այդ սկզբունքների հիման վրա միջնորդները փորձեցին կարգավորման համաձայնագիր ստեղծել, սակայն, այդ համաձայնագիրը երբեք ստորագրմանը մոտ չի եղել: Միեւնույն ժամանակ, այն տարիներին երկիրը ինտենսիվ զարգանում էր, մենք առաջ էինք անցել Ադրբեջանից թե բարեփոխումներով, թե արտաքին քաղաքական ակտիվությամբ եւ բանակցում էինք, վստահ լինելով, որ ի գորու ենք չեզոքացնել հակամարտության ուժային լուծման ցանկացած փորձ:

Բայց այս ամենը 10 տարի առաջ էր: Ադրբեջանի գործողությունները, նրա ագրեսիվության աստիճանը, անվստահության մակարդակը բոլորովին այլ էին: Չկար հայ սպային Բուդապեշտում զլխատած հանցագործի պետական հերոսացումը, չկար ապրիլյան պատերազմը, իսկ

հրադադարը խարսխված էր ուժերի հավասարակշռության վրա, ինչի մի մասն էին հանդիսանում վերահսկվող տարածքները: Ակնհայտ է, որ «Մադրիդյան սկզբունքներն» իրենց նախկին տեսքով արդեն չեն համապատասխանում նոր իրողություններին եւ վերանայման կարիք ունեն: Առաջին հերթին՝ անվտանգության երաշխիքների ուժեղացման համատեքստում, հանրաքվեի ժամկետների ճշգրտմամբ եւ դրա կապակցմամբ՝ տարածքների վերադարձի հետ: Օրինակ, համաձայնագրի անբաժանելի մաս կարող են դառնալ. ռազմական բալանսի վերականգնումը, կողմերի եւ միջազգային հանրության կոշտ եւ վերահսկվող պարտավորությունները այդ բալանսի պահպանման մասով առնվազն 25 տարի ժամկետով:

Ո՞րն է ԼՂ հարցի՝ Ձեզ համար ընդունելի կարգավորման տարբերակը:

Բազմաթիվ անգամ խոսել եմ այդ կապակցությամբ, եւ իմ կարծիքը չի փոխվել: ԼՂՀ անկախությունը եւ Հայաստանի հետ ընդհանուր սահմանի առկայությունը չեն կարող սակարկության առարկա լինել: Ընդ որում, ապրիլյան պատերազմը պետք է կարծրացնի մեր մոտեցումները կարգավորմանը, այլ ոչ թե թուլացնի դրանք, քանի որ մեծացնում է որեւէ զիջումների գնալու ապագա ռիսկերը: Կրկնվեմ. առաջին հերթին անվտանգության երաշխիքներով եւ հանրաքվեի կոշտ կապակցվածությամբ վերահսկվող տարածքների մի մասի վերադարձի հետ: Հաշվի առնելով փոխվտահոյության գրոյական մակարդակը, պետք է բացառել անորոշությունները, ինչպես նաեւ հակամարտության կողմերի՝ ապագա համաձայնագրի որեւէ կետի ազատ մեկնաբանելու հնարավորությունը:

Ինչպե՞ս կգնահատեք Հայաստանում ստեղծված քաղաքական, տնտեսական վիճակը:

Ցավոք, ոչ մի հուսադրող բան ասել չեմ կարող: Մեր վիճակագրությունն այլեւս չի արտացոլում իրական տնտեսական իրավիճակը, իսկ կառավարությունը դադարել է ձեւակերպել եւ ձեւավորել տնտեսական քաղաքականությունը: Սոցիալական ցանցերն այսօր ինչպես մարդկանց տրամադրությունների, այնպես էլ երկրում ձեւավորված սոցիալ-քաղաքական իրավիճակի ամենօրյեկտիվ ցուցիչն են: Արդեն մի քանի տարի է, ինչ հասարակության մեջ դիտվում է բացասական տրամադրությունների ինտենսիվ կուտակում: Այսօր դրանք չափազանց սրվել են, ընդ որում՝ այդ տրամադրությունների ծայրահեղականացման գործընթաց է ընթանում: Դա չի կարող չանդրադառնալ ներդրումային ակտիվության, գնողական տրամադրությունների, միգրացիայի, այսինքն՝ ընդհանուր առմամբ տնտեսության վրա:

Ի՞նչ գնահատական կտաք «Մասնա ծեռ» խմբի գործողությանը:

Ռադիկալ դրսեւորումներ կարող են լինել ցանկացած, նույնիսկ ամենաբարեկեցիկ եւ ժողովրդավարական երկրներում: Ամենուրեք կգտնվեն մարդիկ, ովքեր ծայրահեղությունների մեջ կտեսնեն քաղաքական եւ սոցիալական խնդիրների լուծման ուղին: Հարցն այն է, թե ինչպես է արձագանքում հասարակությունը ներքաղաքական խնդիրների ուժային, զինված լուծման փորձերին: Ինձ առավելապես մտահոգել է մեր հասարակության ռեակցիան տեղի ունեցածին: Չնայած զոհի առկայությանը, ընդամենը մեկ օր հետո հասարակության մեջ գերակշռող դարձավ

զինված խմբի ընկալումը՝ որպես ապստամբների, որ մարտահրավեր են նետել իշխող ռեժիմին:

Սա խոսում է մարդկանց տրամադրությունների, իշխանության հանդեպ նրանց վերաբերմունքի, այն ճնշման մասին, որ գործում են հասարակական գիտակցության վրա քրոնիկ դարձած քաղաքական, տնտեսական եւ սոցիալական խնդիրները: Սա դեղին քարտ է երկրի քաղաքական համակարգին: Կրկնվեմ. ոչ թե ինքնին ոստիկանական գնդի գրավման փաստը, այլ հասարակության արձագանքը այդ գործողությանը, փողոցում ու սոցիալական ցանցերում մասսայական աշակցության արտահայտումը եւ կատարողների հերոսացումը:

Այսպիսի երեւույթը հնարավոր չէ արհամարել եւ դրա հետ պետք է ինչ-որ բան անել, հակառակ դեպքում երկիրը ապրելու է ասես վառողի տակառի վրա: Պետք են արմատական ռեֆորմներ, մարդիկ պետք է քաղաքական մրցակցություն տեսնեն երկրում եւ փոփոխությունների հնարավորություն՝ լեգիտիմ ընտրական գործընթացի, այլ ոչ թե պետական հիմնարկներ գրավելու եւ պատանդներ վերցնելու միջոցով:

Մշակույթ

Աղձքում Արշակունիների արքայատոհմի գերեզմանատեղիիում մասունքներով քարե դամբարաններ են գտել



Աղձքում հայ թագավորներից Արշակունիների արքայատոհմի գերեզմանատեղիիում, որը թվագրվում է մեր թվականության 4-րդ դարով, պեղումների ընթացքում հայտնաբերվել են մասունքներով քարե դամբարաններ: Այս մասին լրագրողներին հայտնել է Հայաստանի մշակույթի նախարարության Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի տնօրենի տեղակալ, հնագետ Հակոբ Միմոնյանը:

Պատմագիրներ Մովսես Խորենացու եւ Փավստոս Բուզանդի համաձայն՝ պարսից շահ Շապուհ 2-րդը իր քրմերի հրահրմամբ հայերին նվաճելու համար Անի-Կամախից (Եփրատի ափին գտնվող Փոքր Հայքի մայրաքաղաք, հեթանոսական Հայաստանի կենտրոն) գողացել է հնագույն հայերի արքաների մասունքները: Հայկական բանակը

ջախջախել է պարսիկներին եւ մասունքները վերադարձրել, որոնք վերաթաղվել են Աղձքի գերեզմանատեղիիում:

Հնագետը նշել է, որ Աղձքի տարածքում նախկինում կատարված պեղումների ընթացքում մարդու մնացորդներ չեն հայտնաբերվել, եւ հին արքաների մասունքները գողանալու պատմությունը դասվել է առասպելների շարքին: 2015 թվականին այստեղ սկսել է աշխատել հնագետների նոր արշավախումբ, եւ մատուռի բեմի տակ՝ քարե սալահատակի տակ հայտնաբերվել են մասունքներով քարե սարկոֆագներ: Գիտնականները նախապես ենթադրել են, որ դամբարանները հեղինակյան դարաշրջանին են պատկանում, սակայն դրանցից մեկի վրա խաչ է պատկերված: Քանի որ սարկոֆագներում միայն ոսկորներ են եղել, գիտնականները ենթադրել են, որ վերաթաղում է կատարվել: Հնագետը ենթադրում է, որ դրանք հենց հայ արքաների այն մասունքներն են, որոնք ինչ-որ ժամանակ հափշտակել էին պարսիկները:



Հայաստանում առաջին անգամ վաղ բրոնզե դարի դամբարանների կողքին ծիսական շինություններ են հայտնաբերել



Հայաստանում պեղումների ընթացքում առաջին անգամ Քրիստոսի ծննդից առաջ երրորդ հազարամյակի առաջին կեսի դամբարանների կողքին նաեւ ենթադրաբար ծիսական կառույցներ են հայտնաբերվել: Այդ մասին սեպտեմբերի 15-ի մամուլի ասուլիսին հայտնել են ԳԱԱ-ի Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանը: Նրա խոսքով, Գեղարոտ վայրում պեղումների ընթացքում դամբարանների հետ նաեւ կիսաշրջանաձեւ շինություններ են հայտնաբերվել, որոնց գործառնությունները դեռեւս պետք է որոշվեն: Քանի որ դրանք դամբարանների կողքին են գտնվում, կարելի է ենթադրել, որ ծիսական նշանակություն են ունեցել:

Պավել Ավետիսյանը պարզաբանել է, որ բրոնզե դարի դամբարաններ են հայտնաբերում նաեւ Վրաստանի տարածքում, եւ Հյուսիսային Կովկասում, եւ Իրանի ու Թուրքիայի տարածքում, սակայն առաջին անգամ գերեզմանների կողքին շինություններ են հայտնաբերվել եւ դա լուրջ ֆենոմեն է, որը դեռեւս պետք է ուսումնասիրվի:

Ինստիտուտի տնօրենը հայտնել է, որ 2016 թվականին դաշտային աշխատանքները սկսվել են հունիսին, իսկ որոշ վայրերում դրանք դեռեւս շարունակվում են. արշավախմբերն աշխատում են Հայաստանի ամբողջ տարածքում:

Մասնավորապես, աշխատանքների մեծ ծավալ է իրականացվել Մոլակ-1 վայրում՝ Վանի թագավորության ժամանակաշրջանի ամրոցում: Այստեղ պեղվել են ամրոցի ավերակները, եւ դրա հատակագիծը ճշգրտությամբ կրկնում է ուրարտական այլ ամրոցների, մասնավորապես՝ Թեյշեբաինիի հատակագիծը: Սակայն ուրարտական շինանյութերի փոխարեն, այստեղ տեղական շինանյութ է օգտագործվել եւ դա բավականին հետաքրքիր բացահայտում է հնագետների համար:



Արագած լեռան լանջին բրոնզե դարի վիշապաքար են գտել (Ֆոտո)



Արագած լեռան լանջին՝ 3000 մետր բարձրության վրա գտնվող Տիրինկատար տեղանքում, հայ, գերմանացի եւ իտալացի մասնագետներից կազմված արշավախումբը հերթական վիշապաքարն է պեղել: Այս մասին սեպտեմբերի 15-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտնեց Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Արսեն Բորոխյանը:

Նրա խոսքով՝ գիտական անալիզը ցույց է տվել, որ վիշապաքարը կարող է թվագրվել մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջով, այսինքն՝ բրոնզե դարի հուշարձան է: Պեղումների ընթացքում վիշապաքարի տակ հնագույն ցորենի, գարու եւ, հնարավոր է, խաղողի մնացորդներ են հայտնաբերվել: Մասնագետի խոսքով՝ օրգանական այս մնացորդները դեռեւս մանրամասն ուսումնասիրության կարիք ունեն:

Այս ընթացքում շարունակվել են նաեւ Մարգահովիտ գյուղում պեղումները, որը գտնվում է Դիլիջանի եւ Վանաձորի միջև: Վերջին հինգ տարիների ընթացքում

այստեղ իրականացվող աշխատանքները ցույց են տվել, որ Մարգահովիտը բրոնզե դարաշրջանի մետաղագործական կենտրոն է եղել:

Արսեն Բորոխյանի խոսքով՝ այստեղ ոչ թե պարզ բնակավայր, այլ հնագույն մետաղագործների ավան է եղել: Պեղումների ժամանակ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի շան բրոնզե արձանիկ է հայտնաբերվել: Գիտնականի խոսքով՝ սա եզակի գտածո է, եւ դրա շնորհիվ կենդանաբանները կարող են պատկերացում կազմել նախապատմական շան տեսքի մասին:



Քարաշամբ՝ բրոնզե դարի եզակի հուշարձան. երբ մեռյալները խոսում են

Անտեղյակ մարդը կարող է անցնել այս տեղով եւ չհասկանալ, թե այն իրականում ինչ է: Առաջին հայացքից պարզապես քարերի կույտ է, եւ առանց մասնագետի բացատրության՝ դժվար է պատկերացնել, որ անմիջապես ոտքերիդ տակ ամփոփված է մարդկության հազարամյա պատմության մի դրվագ:



Քարաշամբ. այդպես է կոչվում այն գյուղը, որի մոտերքում արդեն մի քանի տարի աշխատում է ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի արշավախումբը:

Այստեղ պեղումները սկսվել էին դեռեւս խորհրդային տարիներին: 1980 թվականին այժմ հանգուցյալ Վահան Հովհաննիսյանը, ժամանակակից սերնդին առավելապես հայտնի որպես քաղաքական գործիչ, զբաղվելով իր առաջին մասնագիտությամբ՝ հնագիտությամբ, այստեղ գտել է արքայական դամբարան: Դամբարանում գտնվել է քանդակադրոշմով հագվազուտ գավաթ՝ թվագրվող մ.թ.ա. 22-21 դդ., որն այժմ ցուցադրված է Հայաստանի

պատմության թանգարանում: Դամբարանում գտնվել են նաև այլ իրեր, ինչպես նաև՝ զոհաբերված կենդանիների ոսկորներ: Այս ամենը վկայում է, որ հազարամյակներ առաջ այստեղ եղել է զարգացած թագավորություն:



Հնագետ Վարդուհի Մելիքյանը պատմեց, որ 1980-ական թթ. այս տարածքը բաշխվել էր մի քանի հիմնարկների՝ որպես ամառանոցային հողակտորներ: Շինարարական առաջին իսկ աշխատանքների ժամանակ բացվել էին հնագիտական ձեռակերտներ, եւ հրավիրվել էին մասնագետներ:



Ամառանոցները, այդուհանդերձ, կառուցվել էին, բայց նրանց արանքում թողնվել էր 3,5 հեկտար հողատարածք, որը հնագիտական բացառիկ հուշարձան է: Աշխատանքների ընթացքում, որոնք սկիզբ առան 2009 թ., հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի աշխատակիցներն այստեղ նշագրեցին մեծ դամբարանադաշտ՝ 776 գերեզմանոցով: Պեղումները ցույց տվեցին, որ այդ տարածքում մարդկանց հուղարկավորել են մոտ 1000 տարիների ընթացքում՝ մ.թ.ա. 20-7 դդ.:



«Մեր գլխավոր նպատակը թաղման ծեսի ուսումնասիրությունն է: Սա այն ծեսն է, որ հարյուրամյակների ընթացքում կրել է չնչին փոփոխություններ: Խոսքը այն շրջանի մասին է, երբ չկային գրավոր աղբյուրներ: Թաղման ծեսը մեզ տալիս է բավականին հստակ պատկերացում մարդկանց կենցաղի, հնագույն հասարակության սոցիալական կառուցվածքի, ժողովրդագրության, ինչպես նաև նրանց կրոնական պատկերացումների մասին»,- ասում է Վարդուհի Մելիքյանը:

Քարաշամբում դամբարանները շատ խիտ են տեղակայված, յուրաքանչյուր գերեզման գատված է շրջանագծով շարված քարերով՝ կրոնիկտով, իսկ կենտրոնում դրված է քարե սալ: Դա հատկապես պարզ երևում է կադրերում, որ արվել են անօդաչու թռչող սարքից: Մեծ դամբարանաթմբերը, բացատրում է հնագետը, քարե սալով ծածկված չեն եղել, նրանք ունեցել են փայտե ծածկեր:

Վարդուհի Մելիքյանը մեզ ցույց է տալիս վերջերս պեղված ուշ բրոնզեդարյան գերեզմանոց: Այնտեղ թաղված էին երկու մեծահասակ եւ մեկ երեխա՝ ամենայն հավանականությամբ, ընտանիք: Այդ շրջանի հուղարկավորություններին բնորոշ էր այն, որ հանգուցյալներին դնում էին աջ կամ ձախ կողքի վրա, կամ բերանքսիվայր, ձեռքերն ու ոտքերը ծալած, ինչպես մոր արգանդում: Հուղարկավորել են նաև առանձին գլուխներ:



Հնագետները եւս մի քանի օր կծախսեն, որպեսզի այդ գերեզմանից խնամքով հանեն բոլոր ոսկորները եւ իրերը, այնուհետեւ այդ ամենը պետք է արձանագրվի եւ ուղարկվի ինստիտուտ՝ հետագա ուսումնասիրության համար:



Ճիշտն ասած, գերեզմանատեղի իջնելու եւ հազարամյա ոսկորների հետ «սելֆի անելու» գայթակորությունը մեծ էր, եւ միայն ինչ-որ բան վնասելու վախը կասեցրեց մեր նկարահանող խմբին: Թեեւ, ինչպես հետո պարզվեց, արշավախմբի աշխատակիցներն իրենք իսկ «մեղքից» զերծ չէին. մի քանի այդպիսի նկար փակցված էր նրանց ֆեյսբուքյան էջերին:

Մասնագետները հուսով են, որ պեղումների ավարտից հետո այս վայրը կվերածվի արգելոցի՝ իր թանգարանով, ուր կցուցադրվեն գերեզմաններից հանված գտածոները: Եւ նաեւ, որ Քարաշամբը կընդգրկվի հայաստանյան զբոսաշրջային երթուղիներում:

Գիտնական.

Բյուրականի աստղադիտարանի բացահայտած գիտական ուղիներն ամբողջ աշխարհի գիտնականներն առայսօր յուրացնում են



Բյուրականի աստղադիտարանի կողմից հարթված գիտական ճանապարհները առայսօր յուրացվում են ամբողջ աշխարհի աստղաֆիզիկոսների ու աստղագետների կողմից: Այս մասին սեպտեմբերի 19-ին լրագրողներին ասել է Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Հայկ Հարությունյանը՝ Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայում աստղադիտարանի 70-ամյակին նվիրված գիտաժողովի բացման ժամանակ

Ավելորդ է ասել, որ աստղադիտարանի կայացման ու աշխատանքի մեջ անգնահատելի է ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի ավանդը: Այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են անկայուն երևույթները աստղերում ու գալակտիկաներում, առայսօր համաշխարհային աստղաֆիզիկայի ուշադրության կենտրոնում են: Դրանցով գիտնականները փորձում են կանխորոշել տիեզերական օբյեկտների էվոլյուցիան, շեշտել է նա:

«Աստղերի ու գալակտիկաների ստեղծումը, տիեզերքում նյութի զարգացումը ու դրա փոփոխությունները՝ այս հարցերում մենք առաջվա պես մասնակցում ենք

համաշխարհային գիտական երկխոսությանը»,- հայտնել է Հարությունյանը

2010 թ. սկսած՝ աստղադիտարանը ստացավ հեռադիտակները ու մյուս սարքավորումները արդիականացնելու հնարավորություն: Այս հարցում աստղադիտարանի տնօրենը նշեց Ռուսաստանի աջակցության կարևորությունը: Ռուս գիտնականների ու կազմակերպությունների հետ կապը չի ընդհատվել, հավելեց նա:

6 մետրանոց հեռադիտակի օգնությամբ անցկացվող ուսումնասիրությունները շարունակվում են Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանում: Իսկ «Ռոսկոսմոս» ռուսական դաշնային գործակալությունը մշտապես օգնում է Բյուրականի աստղագետներին արդիականացնել սարքավորումը:

«Ռուսաստանի գիտնականների հետ շարունակվում են աստղերի ստեղծման մասերում ռեյաթիվիստիկ շիթերի հետազոտությունները»,- հավելել է աստղագետը:

Թուրքիայում միակ ցուցանակը որտեղ գրված է Հայկական թագավորություն



Թուրքիայում կա եզակի ցուցանակ, որտեղ նշված է Հայկական թագավորություն:

Ներկայիս Թուրքիայի տարածքում հայտնված հայկական Կիլիկիան թագավորության օրոք կառուցված եւ ներկայում մզկիթի վերածված Տարսուսի Սուրբ Պողոս եկեղեցու պատին փակցված ցուցանակի վրա թուրքերենով ու անգլերենով գրված է, որ եկեղեցին կառուցվել է 11-րդ դարում Հայկական թագավորության ժամանակ Օշին թագավորի կողմից:

Սա եզակի գրություն է, որովհետեւ Թուրքիայի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների, այդ թվում Բագրատունյաց մայրաքաղաք Անիում որեւէ տեղ նշված չի հայ կամ Հայաստան բառը: Իսկ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու ցուցանակի վրա միայն 2015-ին ավելացվեց «հայկական եկեղեցի» արտահայտությունը: Իսկ Հայաստան կամ Հայկական թագավորություն գրությունը բացի Սուրբ Պողոս եկեղեցու ցուցանակից, այլ տեղ չկա:

چکیده کتاب تاریخ آرتساخ (قره باغ)

(۷)

نگارش: دکتر ادیک باغداساریان

رویدادهای آرتساخ (قراباغ) در سالهای ۱۹۲۳-۱۹۱۷


دسته‌های نظامی ارتش سرخ در محور روستاهای تاغر بزرگ و توم زیر حملات کوبنده شورشیان در ۱۶ آوریل مجبور به عقب نشینی شدند. شورشیان با استفاده از شرایط پدید آمده و با دریافت نیروهای کمکی نژده، روزهای ۱۷ و ۱۸ آوریل اقدام به حمله کردند لیکن موفق به شکافتن جبهه نشدند. توان از نژده نیروهای تازه نفس درخواست کرد. آرشاک بالاسانیان که گروهان کمونیستها را فرماندهی می‌کرد، بعدها نوشته است که شورشیان با دریافت "نیروهای کمکی و با استفاده از عدم موفقیت ما در جبهه راست.... فعالیت چشمگیری نشان دادند و حملات خود را بر روی گروهان کمونیستها ادامه دادند لیکن با از دست دادن موکوچ افسر نظامی و دیگران.... به پایگاه خود آغجا کند عقب نشینی کردند". شورشیان پیرم خان، پارسادان شوشانتسی و کمیسر خود را از دست دادند که هابریک می‌نامیدند. نظامیان ارتش سرخ در محور توغ-توم روز ۱۸ آوریل دست به حمله زدند و پس از جنگ‌های شدید مقرر توان را تصرف کردند. روز بعد، ۱۹ آوریل، آخرین پایگاه شورشیان در خزابرد سقوط کرد. جوخه توان به زانگزور رفت و به نژده پیوست.

بدین سان جنبش مردمی آرتساخ در سالهای ۲۱-۱۹۲۰ چنین پایانی داشت.

